Պետության ֆունկցիան ոչ թե այն է, որ աղքատ մարդիկ պետությունից գումար չստանան, այլ այնպես անի, որ աղքատները համակարգից դուրս չմնան: Երբ դնում ես նպատակ, որ մարդկանց ուղղակի համակարգից դուրս թողնես, որովհետեւ նրանք լավ են ապրում, նշանակում է՝ դու, որպես ղեկավար, համակարգը չես կարողանում աշխատեցնել:

Կարդացեք՝ էջ 4

Դիմելով այլ երկրներին, խնդրելով լուծել ՀՀ քաղաքացիների խնդիրները՝ մենք խոստովանում ենք, որ մենք՝ որպես հասարակություն, անընդունակ ենք լուծելու դրանք, անզոր ենք նաեւ ապօրինի եւ հակազգային իշխանություններին փոխարինել օրինական, արդար եւ ազգային իշխանությամբ, մեր միակ հույսն արտաքին միջամտությունն է:

Կարդացեք՝ էջ 5

Ադրբեջանը փորձում է ջնջել ամեն բան, ինչը կարող է վկայել անցյալում իր կախվածության մասին: Միայն ԽՍՀՄ հիշողությունից ձերբազատվելը չէ հարցը: Բաքուն պետական համակարգի ցենտրալիզացիայի կուրս է վերցրել, ինչի վկայությունը Նախիջեւանի ԻՀ նոր սահմանադրության նախաբանն է, որ այն Ադրբեջանի անբաժանելի մասն է:

Կարդացեք՝ էջ 6

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 12 (4147), 5 փետրվար, հինգշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am

ՔՊ պատգամավորության թեկնածուի հայտ ներկայացրած 380 անձից՝ վարչության քասթինգից հետո գրանցվել է 280-ը, 100-ը կտրվել է: Օրերս եւս 10 թեկնածու է ինքնաբացարկ ներկայացրել, չի բացառվում, որ մինչեւ ընտրություն էլի լինեն: Մեր աղբյուրներն ասում են, որ այնքան անհեռանկար ընտրություն է լինելու, որ շատերը չեն ուզում «ընտրագրավը» կորցնել: Հիշեցնենք, որ գրանցումից հետո՝ ընտրությունից առաջ, թեկնածուները 500 հազարական դրամ են մուծվել կուսակցական գանձարան, անկուսակցականները՝ 1.5 միլիոն: Բայց քանի որ գրանցված թեկնածուներին հնարավորություն չի տրվում ներքին քարոզարշավ անել՝ հանդիպել ընտրիչների հետ, համոզել, որ իրենց ձայն տան, կարող են այդ գումարը կորցնել եւ պատգամավոր էլ չդառնալ: Իսկ 1000 ընտրիչները, որոնք ՔՊ տարածքայինների անդամներն են, ընտրության օրը՝ ներկայացված ցուցակից ընտրելու են ծանոթ-մտերիմ սկզբունքով, ուստի շատերը հայտնվելու են ցուցակի հետնամասում: Դժգոհ են հատկապես ՔՊ պատգամավորները: Ասում են՝ սրսկված շուրթերով ինչ-որ աղջիկների ընտրիչներն ավելի շատ ձայն կտան, քան մեզ՝ գործող պատգամավորներիս: Թեկնածուները կարող են միայն ֆեյսբուքյան գրառումներով պատվիրակների քվեն խնդրել, իսկ ով փորձի ծածուկ հանդիպել ընտրիչներին, զգուշացրել են, որ կհեռացվեն ՔՊ-ից: Ի դեպ, արգելել են նաեւ մյուս թեկնածուների դեմ հակաքարոզչություն անելը՝ քվե չտալու խնդրանքով ընտրիչներին դիմելը:

ԱԺ փոխխոսնակ Հակոբ Արշակյանին, որը չի առաջադրվել առաջիկա ընտրություններին մասնակցելու համար, ՔՊ վարչությունն ընտրել է ներկուսակցական ընտրությունների հաշվիչ հանձնաժողովի նախագահ: Խոսքը փետրվարի 12-15-ը նշանակված պատգամավորության թեկնածուների ընտրությունների մասին է: Թե ինչու Արշակյանը, որին թույլ չէին տվել մասնակցել ՔՊ համագումարին, քանի որ անդամավճար չէր մուծել, եւ նա վիրավորված որոշել էր չառաջադրվել, պետք է հաշվի ՔՊ ընտրությունների արդյունքները եւ մասնակցի նախընտրական ցուցակի կազմմանը, մեր աղբյուրներն ասում են, որ Փաշինյանն ամեն ինչ անում է, որպեսզի գեթ մեկ մարդ չպոկվի ՔՊ-ից, չթշնամանա իրենց հետ եւ չանցնի հակառակորդի ճամբարը: Փորձում է բոլորի հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանել եւ պաշտոնի խոստումներով պահել իր մոտ: Հաշվիչ հանձնաժողովի նախագահի պաշտոնը մեծ բան չէ, բայց Արշակյանին տեսադաշտում պահելու համար բավարար է: Նա հետեւելու է ՔՊ քվեարկության ընթացքին, հաշվելու է ամեն մեկի ձայնը եւ հրապարակելու է արդյունքները:

Անցյալի հուշերով

Եթե դու քո բոլոր նախկին հայտարարություններից հրաժարվել ես եւ խոստումներդ դրժել, իրավունք չունես նոր խոստումներ տալու եւ վստահեցնելու, որ այսուհետ խոստումներդ կկատարես: Եթե չես կատարել 2021-ի նախընտրական ծրագրիդ եւ ոչ մի կետ, իրավունք չունես 2026-ին առաջադրվելու եւ պահանջելու, որ հասարակությունը կրկին վստահի քեզ: Եթե դու քո բոլոր սկզբունքներից ու ծրագրերից հետ ես կանգնել՝ հայտարարելով, որ երբ դրանք տալիս էիր, իրավիճակն այլ էր՝ աշխարհը փոխվել է, եւ հնարավոր չէ այդ սկզբունքները պահել, ծրագրերն իրագործել, ապա չես կարող պնդել, որ հավատարիմ ես մնացել քո հայացքներին ու ժողովրդին: Եվ իշխանության լեգիտիմությունն էլ փխրուն հասկացություն է, շատ ավելի անկայուն, քան ցանկացած այլ բան: Այդ լեգիտիմությունը կարող է թղթե տնակի նման փլվել ընտրություններից ընդամենը մեկ շաբաթ անց, որովհետեւ մի կոպիտ սխալ, մի անզգույշ քայլ, պետության շահերին հասցված մի փոքրիկ վնաս կարող են ցանկացած իշխանության ժամերի ընթացքում զրկել լեգիտիմությունից, ուր մնաց՝ ընտրություններից 4-5 տարի անց այն պահպանված լինի: Չէ՞ որ այս 4-5 տարում շատ ջրեր են հոսել՝ Հայաստանը բոլորովին այլ երկիր էր 2020-21 թվականներին եւ բոլորովին այլ երկիր է 2025-26-ին, ուստի ժողովուրդն էլ է բոլորովին այլ, իշխանությունն էլ, առավել եւս այլ է ժողովրդի վերաբերմունքն առ իշխանություն: Եվ երբ կառավարության ղեկավարն իր նախորդ հայտարարություններից տրամագծորեն տարբերվող հայտարարություններ է անում՝ դա բացատրելով աշխարհաքաղաքական փոփոխություններով, օբյեկտիվ պատճառներով, առնվազն ծիծաղելի է հոխորտանքը, թե՝ լեգիտիմ իշխանության հետ իրավունք չունեք նման լեզվով խոսել: Քո լեգիտիմությունը հարափոփոխ աշխարհում վաղուց անցել է պատմության գիրկը:

Բանակի օրը՝ հունվարի 28-ին, Նիկոլ Փաշինյանն այցելել էր Չինվորի տուն, որը գործում է Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանին կից: Չինվորի տանը մանրակրկիտ պատրաստված են եղել այցին: Թեեւ զինծառայության ընթացքում հաշմանդամ դարձածների եւ Չինվորի տուն հաճախողների թիվն ընդհանուր առմամբ գերազանցում է 10 հազարը, բայց Փաշինյանի հետ այդ օրն ուղիղ շփման հնարավորություն են ունեցել մի քանի ընտրյալ միայն՝ 5-6 հոգի, որոնք վերականգնողական թերապիա են անցնում այնտեղ: Նրանց հետ նախնական զրույց են ունեցել, պատրաստել են հանդիպմանը, շոշափել տրամադրությունները, որ Փաշինյանին հանկարծ «անակնկալներ» չմատուցեն: Այնպես որ, հրապարակված տեսանյութում երեւացող որեւէ մեկը պատահական չէր հայտնվել այնտեղ, բոլորն իմացել են իրենց դերը, անելիքն ու ասելիքը: Նախապես որոշված է եղել նաեւ, թե շրջայցից հետո ճաշկերույթին ովքեր են Փաշինյանի հետ նույն սեղանի շուրջ նստելու:

ԱՅՍՕՐ ԹԵԺ Է ԼԻՆԵԼՈՒ

ԱԺ պետահիրավական հարցերի հանձնաժողովում այսօր ընդդիմություն-իշխանություն փոխհրաձգություն է սպասվում: Քննարկվելու է «Հայաստան» դաշինքի հեղինակած՝ քաղբանտարկյալների վերաբերյալ հայտարարության նախագիծը: Ի դեպ, այս թեմայով անցած տարվա նոյեմբերին նաեւ ԱԺ լսումներ էին հրավիրվել: Նախագծում նշվում է. «Հայաստանում ժողովրդավարությունը հետընթաց է ապրում, եւ դրա դրսեւորումն է նաեւ աննախադեպ թվով քաղբանտարկյալների առկայությունը»: Հայտարարության համար հիմք է հանդիսացել Հայաստանում արձանագրվող ժողովրդավարության հետընթացը, որի բաղկացուցիչ մասն են կազմում խոսքի, խղճի, հավաքների, ազատությունների կոպիտ ոտնահարումները, ՁԼՄ-ների հանդեպ ճնշումները, շինծու քրեական գործերը, քաղաքական այլ հայացքներ ունեցող գործիչների եւ քաղաքացիների նկատմամբ ընտրովի դատավարությունը: Մեր տեղեկություններով, իշխանականները մարտական են տրամադրված եւ այսօր մեծ արսենալով ներկայանալու են քննարկմանը, որ ջախջախեն ընդդիմության փաստարկները: Ի դեպ, երեկվանից Հայաստանում է գտնվում ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարը, եւ այսօր ՀՀԿ-ն կեսօրին ակցիա է անելու ԱԺ-ի մոտ:

ԵԿԵՂԵՑԻ

ՄԵՐ ԱԶԳԻ ԵՐԵՔ ՍՅՈՒՆԵՐԻՑ ԵՐԿՈՒՍԸ ՔԱՆԴՎԱԾ Է, ՄՆՈՒՄ Է ՎԵՐՋԻՆԸ

«Հրապարակ»-ի զրուցակիցը Գյումրու Սուրբ Աստվածածին Յոթ Վերք եկեղեցու քահանա **Տեր Հուսիկ Գրիգորյանն** է:

- Տեր Հուսիկ, ինչ է կատարվում այսօր: Ճնշումները Հայ առաքելական եկեղեցու եւ հոգեւորականների նկատմամբ շարունակվո՞ւմ են:

- Խորքային իմաստով, հոգեւորականությունն այսօր անցնում է փորձաշրջան: Նայեք, երբ ոսկուն կպչում ես որպես մետաղ, նախ ուզում ես որոշել նրա պրոբը՝ մաքրությունը, դրա համար այն թրծում եւ կրակի մեջ ես պահում: Եվ մեր հոգեւորականների համար էլ այս պահին հենց կյանքի այդ փորձաշրջանն է, որի միջոցով որոշվելու է մաքրության աստիճանը: Եվ երբ կարողանում ես հաղթահարել այդ փորձությունը, որպես մարդ՝ ճանաչում ես ինքդ քեզ:

- Ի պատիվ Շիրակի թեմի հոգեւոր դասի՝ այստեղ չունենք, ինչպես ընդունված է ասել, «տիրադավ հոգեւորական»: Ինչո՞վ է դա պայմանավորված:

- Մենք հավատարիմ ենք մնացել մեր ուխտին, որ կապել ենք Սուրբ Էջմիածնի հետ: Գիտեք՝ չնայած տարատեսակ խոսակցություններին, յուրաքանչյուրս իր որոշումը կայացրեց, որը հենց հավատարմությունն է Քրիստոսին:

- Պաշտպանության նախարարի հրամանով գնդերեցների խումբը լուծարվեց: Որոշվեց, որ հոգեւորականներն էլ ծառայության պետք է անցնեն այլ ձեւաչափով՝ ունենան մայորի, կապիտանի կոչում եւ այլ կարգեր, այլ ոչ թե հատուկ նշանակված հոգեւորականներ լինեն, որոնք ուղղակի զինվորի կողքին են, զորամասերում: Ի՞նչ կարծիք ունեք, սա ի՞նչ ազդեցություն կունենա մեր զինվորների հոգեբանության վրա, ի՞նչ նպատակով է արվում:

- Պատմության տեսանկյունից կասեմ, որ հոգեւորականների ներկայությունը բանակում կարեւոր է եղել հենց պատերազմական իրավիճակում, զինվորի կողքին լինելն ունի մեծ նշանակություն: Ես հիշում եմ, որ պատերազմի ընթացքում գնում էինք խրամատներ, եւ երբ զինվորները մեզ տեսնում էին հենց իրենց կողքին, ինչ զգացողություն էին ունենում: Կային հոգեւորականներ, որոնք մնում էին այնտեղ, ցրտին փաթաթվում, տաքացնում էին զինվորներին: Ու տեսնում էիր, թե ինչպես է մարդու հոգեվիճակը փոխվում, եւ ինչպես է նա զորանում: Իսկ հիմա սա նշանակում է, որ հայ ազգը թողնում է իր զինվորին առանց հոգեւոր զորացման, ասում ենք՝ մեր զինվորին զորացում պետք չէ: Եթե սա այսօր ընդունելի է մեր ժողովրդի կողմից, ի՞նչ կարող ենք անել: Իհարկե, մենք շարունակաբար հնչեցնելու ենք մեր ուղերձը՝ հիշեցնելով, որ մարդն առանց Աստծո չի կարող ապրել: Թեկուզ՝ հենց այս ժամանակաշրջանում. ինչ տեսակի փորձությունների միջով էլ անցնենք, միեւնույն է՝ մենք շարունակելու ենք հորդորը հնչեցնել: Որ, անկախ ամեն ինչից, մարդիկ պետք է պահպանեն իրենց հոգեւոր վիճակը: Այսպես նրանք զորանում են եւ ամրանում հոգեպես: Եթե քայլ է արվում՝ փոխել մարդու հոգեվիճակը, իսկ մենք գիտենք՝ ով է մարդու հոգեվիճակը փորձում փոխել, դա չարն է, որի դեմ պիտի մարտնչես: Միքայել սրբազանը մի հետաքրքիր բան էր ասում. քահանան զինվոր է, կռվում է չարի դեմ, մարտնչող է, իսկ կուսակրոնը՝ մահապարտ: Եթե զինվորն ինչ-որ տեղ կարող է թերանալ, ապա մահապարտ կուսակրոնին դա թույլատրված չէ: Ի դեպ, մեր սրբազանը հիմա հենց էդ մահապարտի կարգավիճակում է:

- Հիմա իշխանությունն ամեն ինչ անում է, որ տապալի Եպիսկոպոսաց ժողովը: 6 եպիսկոպոսի արգելվեց դուրս գալ երկրի սահմաններից, իսկ ժողովը նախատեսված է արտերկրում:

- Մասնակցության ֆորմատը տարբեր կարող է լինել: Ես չգիտեմ՝ այս դեպքում Վեհափառն ինչ որոշում կկայացնի, բայց չի բացառվում, ինչպես COVID-ի ժամանակ հեռավար անցկացվեց Եպիսկոպոսաց ժողովը, այս անգամ էլ, որպեսզի ամեն ինչ չտապալվի, չի բացառվում, որ հենց այդպես էլ արվի: Իհարկե, ես նորից եմ ասում, դեռ չգիտեմ, թե Վեհափառն ինչպես է որոշել:

- Ի՞նչ պիտի արվի, Տեր հայր, ի վերջո, այս վիճակից դուրս գալու համար, իրատեսական ի՞նչ քայլեր պետք է արվեն:

- Այսօր շատերը մակերեսորեն են իրավիճակին նայում, խորքային չեն փորձում տեսնել՝ ինչ է կատարվում: Շատերի համար այսրոպեական իրավիճակն ավելի կարեւոր է: Ասենք, եթե տեսնում են՝ մի լավ բան է լինում, ասում են՝ տեսնում եք՝ լավ է ամեն ինչ: Էժան բենզին ենք գնում, խաղաղություն է հաստատվել, թուրքը մեր թշնամին չէ այլեւս, սակայն ամեն ինչը պետք է խորքային ուսումնասիրել: Էսպիսի իրավիճակներն օրինակ բերելով՝ չպետք է մոռացության տանք մեր պատմությունը, թափած արյունը:

- Լավ, իսկ Եկեղեցին ինչո՞վ է խանգարում այդ լավ ապրելուն: Եկեղեցին ասում է՝ եկեք թշնամությունն անենք:

- Հայի եկեղեցին Հայաստանի ամենահզոր սյունն է: Եթե այդ սյունն ուզում են քանդել, նշանակում է՝ ձեռք են մեկնում հայ ազգի ոչնչացմանը: Հիմա մեր երեք սյուներից երկուսը քանդված է: Ազգային գաղափարներից մեկը՝ մեր հայոց բանակի եւ Արցախի հարցը լուծեցին: Եվ երկրորդը. սփյուռքի հարցը եւս գրեթե լուծեցին: Մնացել է միայն ազգային մի բան՝ դարերով եկած ազգային հայոց եկեղեցին: Հիմա որտեղ կա հայկական համայնք, կտեսնեք՝ ով է պահում հային հայ, դա Եկեղեցին է: Բայց գիտեք, պատմության մեջ դեռ 1922 թվականին եղել է, որ մեր եպիսկոպոսներից մեկը, կարծեմ՝ Աշոտ Շահբազյանը, դեմ գնաց հայրապետական կարգերին: Ընդամենը 5 տարուց՝ 1927 թվականին, աղերսում էր, որպեսզի ներեն իրեն: Մենք այսպիսի բաներ շատ ենք տեսել, երբ եպիսկոպոսը դուրս է գալիս իր սեփական եկեղեցու հայրապետական կարգերի դեմ: Այս ամենը նորություն չէ, բայց մյուս կողմից էլ հայ ազգը պիտի հասկանա, կարողանա այսօր զատել ճշմարտությունը եւ իրեն ուղղել դեպի մայր եկեղեցին, դեպի հավատն Աստծո:

Արեւիկ ՀԱԿՈԲՅԱՆ

ԲՈԼՈՐՍ ԻՆՔՆԱԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՆՔ, ՄԵԿԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ Է ԳՐՈՒՄ, ՕՐԻՆԱԿ՝ ԵՍ



Զրուցել ենք ՔՊ-ական պատգամավոր, «Վարչաբենդի» դիսկոտեկին մասնակցած ՔՊ-ական, նախկինում ԲՀԿ-ական պատգամավոր **Սերգեյ Բագրատյանի** հետ:

- Պարոն Բագրատյան, Փաշինյանի դիսկոտեկին Ձեր եւ Գագիկ Մելքոնյանի մասնակցությունը շատ քննարկվեց, ի՞նչ գործ ունեիք այդ երիտասարդական ժամանցին:

- Մենք հայտարարությունը նայեցինք, ես ու Մելքոնյան Գագիկն էինք, իսկապես, չգիտեինք՝ ինչ ձեւաչափով է, մտածեցինք, որ հաճելի համերգ կարող է լինել, գնանք լսենք:

- Բայց Նիկոլ Փաշինյանը մի քանի անգամ գրել էր, որ դիսկոտեկ է լինելու:

- Դիսկոտեկի մասին կարող էինք չմասնակցել, ասացին՝ նոր երգեր են հնչելու, մտածեցինք՝ գնանք. երիտասարդների հետ դիսկոտեկի մասնակցելու մտադրություն, ցանկություն չունեինք, մենք գնացինք համերգի համար:

- Չե՞ք պարել:

- Չէ, լսեցինք երաժշտությունը:

- Իսկ ինչո՞ւ չպարեցիք:

- Մելքոնյան Գագիկի ոտքը ցավում էր, ես էլ, հարգելով իրեն, ապրումակցելով իրեն՝ չպարեցի, նստեցինք, համերգ լսեցինք:

- Իսկ գուցե ձեզ կանչել էին, որ մասսովկա՞ ապահովեին, ասում են՝ մասնակիցների յոթ պորտ ստուգել են, որ օտարներ չմասնակցեն, անակնկալներ չլինեն:

- Ոչ, այդպես չի եղել: Անկեղծ եմ ասում, համերգ շատ եմ սիրում, իմացա, որոշեցինք գնալ:

- Բայց Փաշինյանը երիտասարդների էր հրավիրել, շատ հստակ գրել էր, ձեր մտքով ինչո՞ւ անցավ՝ գնալ:

- Այո, երիտասարդների էր հրավիրել, բայց վերջում՝ համերգից 4-5 օր առաջ պարզեցինք, որ պատգամավորները եւս կարող են մասնակցել, ու ես Մելքոնյանին հիշեցրի, որ նման միջոցառում կա, գնացինք:

- Իսկ հնարավո՞ր է առաջիկայում ձեզ էլ ինչ-որ կարգավիճակով տեսնենք այդ բենդում, ձեր թիմակիցները հերթով բացահայտում են իրենց նախասիրությունները, մեկը կլարնետ է սիրում նվագել, մյուսը պարում է:

- Ես դաշնամուր եմ սիրում նվագել, բայց պարապմունքների ժամանակ հասկացել եմ, որ երաժշտական ունակություններս չեն փայլում, մեր մանկության ժամանակ ընդունված էր, որ երաժշտական գործիքի պիտի հաճախեիր, հաճախել եմ:

- Բայց կարող եք Անահիտ Ավանեսյանի պես պարել:

- Բոլորը կարող են պարել, բայց ավելի հաճելի է երիտասարդների պարը:

- Ինչո՞ւ, ըստ Ձեզ, Փաշինյանը որոշեց հարվածային գործիքների վրա նվագել:

- Յուրաքանչյուրս ինքնաիրացման խնդիր ունենք, մեկը բանաստեղծություններ է գրում, օրինակ՝ ես, մյուսն այլ բանով է զբաղվում: Եթե երկրի ղեկավարը տիրապետում է երաժշտական գործիքի եւ կարողանում է երիտասարդներին երաժշտությամբ գրավել, հաճելի է:

- Նորմա՞լ է, որ մեր երկրում, որտեղ բազում խնդիրներ կան, վարչապետի պաշտոնում աշխատող մարդն այնքան պարապ ժամանակ ունի, որ նվագել է սովորում, ինքնիրացման խնդիրներ լուծում 50 տարեկանում:

- Ես չեմ կարծում, որ որեւէ պաշտոնյա այնքան զբաղված է, որ ուրիշ բան չի կարող անել, եթե ժամանակդ ճիշտ տեղաբաշխես, ամեն ինչ էլ կարող ես անել: Սթիվ Ջոբսի ասածին կողմ եմ, որ մարդը պետք է աշխատի գլխով, ոչ թե 24 ժամ:

- Ռոբերտ Քոչարյանն ասում էր, որ ՔՊ-ն ամենացածր վարկանիշն ունի երիտասարդության շրջանում, եւ ակնարկում էր, որ Փաշինյանը դրա համար է այդ «կապիկություններն անում», որ վարկանիշը բարձրացնի երիտասարդության մոտ:

- Դա իր կարծիքն է, եւ կարծում եմ, որ ինքը պրոյեկտում է իր անելիքը ՔՊ-ի վրա, ինչ է նշանակում նման բառապաշարը: Եթե ուրիշը կապիկություններ կանի, թող անի, ամեն մարդ մի կապիկություն է անում: Ես կարծում եմ, որ երիտասարդները բազմաշերտ են, այո, կան խմբեր, որոնց գրավում է մեր քաղաքական ուժի կարծիքը, գործելակերպը, կլինեն խմբեր, որոնք չեն ընդունի:

- Իսկ վերջին համերգը ո՞րն է եղել, որին մասնակցել եք:

- Ջենիֆեր Լոպեսի համերգին ենք մասնակցել, հայտնի երգիչների համերգներին միշտ էլ հաճելի է մասնակցել, կամ եթե Վրաստանի վարչապետը գա՝ համերգ տալու, հաճելի չի՞ լինի:

- Մի խոսքով, մշակութասեր, համերգասեր պատգամավոր եք, ու մանդատի համար չէ, որ գնացել եք համերգ լսելու:

- Բայց մանդատն ի՞նչ կապ ունի:

- Գնում եք, աչք մտնում, ծափ տալիս վարչապետին, ձեր կուսակիցների աչքին էլ եք բարձրանում, թե ինչ հավատարիմ եք:

- Կուսակցության ղեկավար է, բնական է, որ պետք է ուշադրության կենտրոնում լինի: Ծայրահեղության մեջ մի ընկեք, մարդկային վիճակ է համերգ տալը, մասնակցելը:

- Մարդիկ ձեզ քննադատում են՝ այսքան աղետ բերեցիք երկրի գլխին, հիմա տժժում եք՝ երգում, պարում:

- Կարծում եմ՝ սուբյեկտիվ կարծիք է՝ ով ինչ բերեց, բայց ի վերջո բոլորս էլ ցավեր ենք ունենում, չկա մարդ, որ ցավեր չունենա, ողբերգություն տեսած չլինի: Ապրենք այդ ողբերգությամբ, մենք պետք է իրար ապրեցնենք, որ կարողանանք հաղթահարել դժվարությունները, եթե մենակ վշտով ապրենք, կմնանք վշտի մեջ:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

2020-ԻՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻԴԵԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍՏԵՂԾԵՑԻՆ՝ ՍԱՀՄԱՆԻՆ ԶՐՈ ԿՐԱԿՈՑ

ԱԲՈՒ ԴԱԲԻ

Երեկ Նիկոլ Փաշինյանը կնոջ հետ մեկնեց Արաբական Միացյալ Էմիրություններ՝ Աբու Դաբի, որտեղ կայանալու էր իր եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը: Բացի այդ, պետք է մասնակցեր «Զայեդ» մարդկային եղբայրության 2026 թ. մրցանակաբաշխությանը, որի այս տարվա մրցանակին են արժանացել ինքն ու Ադրբեջանի նախագահը՝ խաղաղության գործընթացի համար: Բանակցություններին ներկա են եղել հայկական կողմից ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը, արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը եւ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, իսկ ադրբեջանական կողմից՝ նրանց վիզավիները՝ համարժեք պաշտոնյաները: Քանի որ շատ սուղ տեղեկատվություն է ստացվում, թե ինչի շուրջ են բանակցում կողմերը, եւ մեր «տառապանքը փորձ ունի», շատերը ենթադրեցին, որ ՀՀ վարչապետը նորից գնացել է ինչ-որ բան տալու, քանի որ Ալիեւը շտապում է, վստահ չէ, որ նա վերընտրվելու է, ուստի ուզում է մինչեւ հունիս նոր խոստումներ եւ շոշափելի բան կորզել:

Մենք ստիպված ենք ուշիուշով կարդալ պաշտոնական հաղորդագրությունները, որպեսզի տողատակերում գուշակեինք, թե ինչ է կատարվում: Կառավարության պաշտոնական հաղորդագրության մեջ ասված է. «Կողմերը ողջունել են Վաշինգտոնում ԱՄՆ նախագահ Դոնալդ Ջ. Թրամփի հյուրընկալությամբ եւ վկայությամբ կայացած Խաղաղության գագաթնաժողովի պայմանավորվածությունների իրականացման գործում արձանագրված առաջընթացը: Նրանք նշել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացի դրական դինամիկայի պահպանման եւ առաջմղման կարեւորությունը՝ երկկողմ ձեւաչափով: Կողմերն ընդունել են, որ երկու հասարակություններն էլ ականատես են լինում խաղաղության իրական օգուտներին՝ առօրյայում: Նրանք գոհունակություն են հայտնել երկկողմ առեւտրի մեկնարկի եւ Ադրբեջանից Հայաստան նավթամթերքի շարունակական արտահանման, ինչպես նաեւ երրորդ երկրներից հացահատիկի եւ այլ ապրանքների տարանցման իրականացման կապակցությամբ՝ Ադրբեջանի տարածքով դեպի Հայաստան:

Կողմերը համաձայնել են շարունակել ուսումնասիրել երկկողմ առեւտրատնտեսական համագործակցության ընդլայնման հնարավորությունները: Նրանք նաեւ ողջունել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների փոխադարձ այցելությունները եւ համաձայնել վստահության ամրապնդման միջոցառումների ընդլայնման անհրաժեշտության հարցում: Վարչապետ Փաշինյանը եւ նախագահ Ալիեւը քննարկել են TRIPP-ի եւ այլ ենթակառուցվածքների նախագծերի իրականացումը»:

Քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է. «Այս հանդիպումը եւ մրցանակը, որ ստանում են Փաշինյանն ու Ալիեւը, կոչվում է խաղաղության եւ եղբայրության մրցանակ: Սա պետք է դիտարկել նախընտրական պայքարի շրջանակներում: Նիկոլ Փաշինյանի նախընտրական քարոզարշավի մեջ տարբեր ուժեր եւ կենտրոններ անում են տարբեր ներդրումներ: Ներդրումներից մեկն այս մրցանակն էր: Ես ուզում եմ մի շատ կարեւոր երեւույթի մասին խոսել, որն իրականում հիանալի երեւույթ է: Այն կոչվում է հիշողություն: Հիշո՞ւմ եք, թե Փաշինյանն ինչ էր անում 2018-2020 թվականներին: Կանաչ գրքույկը ձեռքին՝ փողոցից փողոց էր գնում, ասուլիսից՝ ասուլիս եւ խոսում էր այն մասին, թե հեղափոխությունն ինչպիսի հաջողություններ է բերել հայ ժողովրդին: Նա մատնանշում էր հարյուր հաջողություն, որն արձանագրվել է հեղափոխության շնորհիվ: Այդ հաջողություններից մեկն էլ այն էր, որ Արցախի եւ Ադրբեջանի շփման գծում չկային կրակոցներ: Բացի այն, որ կրակոցներ չէին հնչում, Արցախում այդ շրջանում սկսվել էր նախընտրական պայքարը: Պարզ էր, որ Բակո Սահակյանն այլեւս չի առաջադրվելու, իսկ Արայիկ Հարությունյանը պետք է դառնար նախագահ: Արայիկ Հարությունյանի ընտրվելու համար իդեալական պայմաններ ստեղծեցին՝ սահմանին զրո կրակոց, իսկ Նիկոլ Փաշինյանը՝ որպես խաղաղության «ռահվիրա», ընտրություններից հետո գնաց, Շուշիում պարեց, որից հետո սկսվեց պատերազմը, եւ դա եղավ Արցախի Հանրապետության վերջին ընտրությունը.... բայց նախընտրական պայքարի ժամանակ մեծ ներդրում էր արվել, այն արել էր Իլհամ Ալիեւը՝ Փաշինյանի հետ միասին: Արցախից մենք տարբերվում ենք մեր կարգավիճակով, մենք ճանաչված պետություն ենք: Քիչ է, որ Փաշինյանը հայտարարի խաղաղության մասին, իսկ Ալիեւը չկրակի, այս ամենին պետք է միջազգային շղարշ տալ: Այդ պատճառով այժմ մրցանակ են ստանում, մայիսին եվրոպական ընտանիքի գագաթնաժողովն է Հայաստանում կայանալու: Բոլորը փորձում են Նիկոլի նախընտրական քարոզարշավի մեջ ներդրումներ կատարել: Իրականությունը սա է: Չզարմանաք, եթե այսօրվա լուսանկարները, Թրամփի հետ լուսանկարները հայտնվեն Փաշինյանի նախընտրական «ռոլիկներում»: Նախընտրական տրամաբանությունից բացի, այստեղ այլ տրամաբանություն չկա: Օգոստոսի 8-ի փաստաթուղթը գիտե՞ք ինչու խաղաղության մասին չէ, որովհետեւ, ամեն ինչից զատ, այնտեղ չկա խաղաղություն ապահովող երաշխիքի անդրադարձ: Դոնալդ Թրամփն ընդամենը ունի վկայի կարգավիճակ՝ ոչ ավելին: Եթե մենք իսկապես խաղաղության մասին խոսեինք, ապա առնվազն Ադրբեջանը մի քանի գործնական քայլ կկատարեր, օրինակ՝ դուրս կգար օկուպացված տարածքներից, Հայաստանի ներքաղաքական կյանքին չէր խառնվի, սահմանադրության փոփոխություն չէր պահանջի կամ գոնե կդադարեր ֆինանսավորել «Արեւմտյան Ադրբեջան» նախագիծը»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Էլեկտրոնային ստորագրություն ստանալը գրեթե անհնար է

Հունվարի 1-ից, ինչպես հայտնի է, աշխատանքային պայմանագրերը կնքվում են միայն առցանց: Դրանք կնքելու համար անհրաժեշտ է էլեկտրոնային ստորագրություն, որն այնքան էլ հեշտ չէ ձեռք բերել: Սա բազմաթիվ խնդիրներ ու դժվարություններ է ստեղծել քաղաքացիների համար: Բանն այն է, որ էլեկտրոնային ստորագրությունը տրամադրում են բջջային օպերատորները: Այն ստանալու համար քաղաքացին պետք է ունենա այդի քարտ: Սովորական կապույտ անձնագրով եւ սոցքարտով հնարավոր չէ էլեկտրոնային ստորագրություն ձեռք բերել: Սակայն այս պահին անձնագրայիններում հերթեր են գոյացել՝ այդի քարտեր ստանալու համար, իսկ առցանց գրանցման հարթակն աշխատում է խափանումներով: Երբ փորձում ես գրանցվել, այն ցույց է տալիս, որ առկա է տեխնիկական խնդիր: «Այսօր 8 անգամ փորձել ենք գրանցվել, եւ ամեն անգամ էկրանին հայտնվել է նույն՝ «տեխնիկական խնդիր» արտահայտությունը: Հիմա ես ինչպե՞ս անցնեմ աշխատանքի»,- հարցնում է Երեւանի բնակիչ Մ. Պ.-ն:

ԻՄ ՔԵՌԻՆ Է ԱՌԵԼ ԿԱՄ ՈՒՐԻՇ՝ ԻՔՍ ՄԱՐԴ, Ի՞ՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ

Չարենցավան համայնքի ավագանու ՔՊ-ական անդամ Նարեկ Բաբայանն ընդգրկվել է 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների ՔՊ նախընտրական ցուցակի թեկնածուների կազմում, որը հաստատվել է ՔՊ վարչության կողմից: Իսկ մինչ ցուցակում ընդգրկվելը, Նարեկ Բաբայանը, մյուս թեկնածուների նման, կուսակցությանն է «մուծվել» 500 հազար դրամ՝ որպես մասնակցության գումար, որը Նիկոլ Փաշինյանն է սահմանել, այսպես կոչված՝ մանդատի գինը:

Նարեկ Բաբայանը եւ մեկ այլ ՔՊ-ական՝ նույնպես Չարենցավանի ավագանու անդամ Արթուր Գալստյանը, դարձել են Չարենցավանի «ասողները»: Մեր տեղեկություններով՝ Չարենցավանի սանէպիդկայանի շենքը պետգույքի կոմիտեից գնել է Նարեկ Բաբայանի քեռին՝ Գեւորգ Սաֆարյանը, որը Չարենցավանում ՍԱՖԱՐԻ ՀՈԼ հարսանյանց սրահի սեփականատերն է: Նարեկ Բաբայանը նաեւ անցած տարի Չարենցավանի կինոյի տան մոտ կայացած ակցիայի կազմակերպիչներից է: Նրանք պահանջում էին, որ Մայր Աթոռը քաղաքի կինոյի տունը վերադարձնի համայնքին:

Նարեկ Բաբայանին հարցրինք, թե կինոյի տան հետ կապված ակցիան ինչ լուծում ստացավ: «Գրություն ենք ուղարկել Մայր Աթոռ, Մայր Աթոռը հրաժարվել է շենքը հետ վերադարձնել համայնքին»: Օտարվել է նաեւ Չարենցավանի սանէպիդկայանի շենքը, ինչո՞ւ մի այդպիսի ակցիա էլ չեք կազմակերպում, որ այդ շենքը հետ վերադարձնեն համայնքին, չարենցավանցիները մեզ հետ զրույցում ասում էին, որ սանէպիդկայանը յուրահատուկ կառույց է, եւ այն որպես թանգարան կարող էր ծառայել քաղաքին: «Դա մշակույթի տուն չի կամ արվեստի գործ չի, դրա համար էլ չենք անում: Համայնքը որ ուզենա թանգարան սարքի, մենք լիքը ազատ տարածքներ ունենք, կարող է թանգարան ստեղծել»:

Որպես համայնքի մասին մտածող քաղաքացի եւ ավագանու անդամ՝ նման գաղափար առաջարկե՞լ եք՝ համայնքում թանգարան ստեղծել: «Ճիշտն ասած, ոչ, մենք Չարենցի տուն-թանգարան ունենք, բայց առանձին Չարենցավանի համար էդպիսի բան չենք մշակել»:

Ճի՞շտ է այն տեղեկությունը, որ Ձեր քեռին է գնել սանէպիդկայանի շենքը: «Ես տեղյակ չեմ, պետգույքին գրություն ուղարկեք, թող սեփականատիրոջ անունն ասի»: Գեւորգ Սաֆարյանը Ձեր քեռի՞ն է, հիմա Ձեզնից ենք ուզում ճշտել այդ տեղեկությունը: «Ես տեղյակ չեմ, ով որ էդ տեղեկությունը տվել է, իրեն ասեք՝ թող պետգույքից գրությունով իմանա: Կամ՝ եթե պետգույքն էդ շենքը դրել է աճուրդի, ուրեմն նպատակահարմար է գտել, որ այդ գույքը վաճառվի, հիմա իմ քեռին է առել կամ ուրիշ՝ իքս մարդ, ի՞նչ կապ ունի»,- ասաց Նարեկ Բաբայանը:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՊԱՍՏ

ՆՊԱՍՏԱԿԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՕԳՆԵԼԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ, ՈՉ ԹԵ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՇՎԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ ԽՆԱՅԵԼԸ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայաստանում փոխել են ընտանիքների անապահովության գնահատման կարգը: «Փարոս» անունով հայտնի նախկին համակարգը, որը գործում էր 90-ականներից եւ քանիցս փոփոխություններ է կրել, հիմա էլ փոխարինվում է նոր՝ թվային մոդելով: 2025 թվականի մարտի 17-ից գնահատման նոր համակարգը փորձնական (պիլոտային) եղանակով գործարկվել է Սյունիքի եւ Կոտայքի մարզերում: Նոր անապահովության համակարգի համաձայն՝ այն ընտանիքները, որոնք կդիմեն նպաստ ստանալու համար, պետք է համապատասխանեն մի շարք պահանջների: Դրանք են.

Շարժական գույք. եթե ունեք ավտոմեքենա, որի գույքահարկը բարձր է սահմանված չափից (2015-ից բարձր արտադրության մեքենա կամ 12 հազար դրամ + գույքահարկով)

Անշարժ գույք. եթե ունեք տուն կամ այլ շինություն, որի գույքահարկը գերազանցում է սահմանաչափը (4 հազար 200 դրամ՝ մարզերում, 12 հազար դրամ՝ Երեւանում)

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը (բացի անհատ ձեռներեցությունից, եթե չունի վարձու աշխատող)

Վարկային պարտավորություններ. սահմանված շեմը գերազանցելու պարագայում (յուրաքանչյուր չափահասի հաշվով՝ նվազագույն պարենային զամբյուղի չափով)

Մաքսավճարներ. եթե կատարել եք ապրանքների ներմուծման կամ արտահանման մաքսային վճարներ (յուրաքանչյուր չափահասի հաշվով՝ նվազագույն պարենային զամբյուղի չափով)

Էլեկտրաէներգիա. եթե ամառային ամիսներին էլեկտրաէներգիայի ծախսը գերազանցում է թույլատրելի շեմը: Այն հաշվարկվում է այսպես՝ 90 կՎտ ժամ (ամբողջ ընտանիքին) + 20-ական կՎտ ժամ ամեն անդամի համար (օրինակ՝ 4 հոգանոց ընտանիքի համար շեմը 170 կՎտ ժամ է (90+4×20)):

Բնական գազ. եթե տարեկան սպառումը գերազանցում է սահմանված շեմը՝ 600 խմ (ամբողջ ընտանիքին) + 110-ական խմ՝ ամեն անդամի համար:

Բարեկեցության գնահատում. տնայցի (Միասնական սոցիալական ծառայության մասնագետն այցելում է ձեր բնակարան) արդյունքում ընտանիքը բարեկեցիկ ճանաչելու հանգամանքը:

Այլ հիմքեր.

Անշարժ գույքի գրավադրմամբ վարկի առկայությունը:

Ընտանիքում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխա ունենալը:

Նկատենք, որ անապահովության պահանջները տարեցտարի խստացվում են՝ մի նպատակով, որ հնարավոր քիչ մարդ համապատասխանի այդ պահանջներին, եւ իշխանությունը կարողանա հայտարարել, որ աղքատությունը երկրում կրճատվել է, իսկ նպաստների կրճատումից խնայողություններ անեն, որ պետական ապարատի պարգեւավճարներն ավելացնեն:

«Նպաստների համակարգում վերջին տարիներին սկսվել են նպաստների համակարգի, չասենք՝ բարեփոխումները, այլ՝ փոփոխությունները: Այս համակարգը ներդրվել էր դեռեւս 90-ականներին, որը գործ ուներ բավականին լուրջ եւ խնդրահարույց զանգվածի հետ: Խոսքն այն մարդկանց մասին է, ովքեր սոցիալական ծայրահեղ ծանր վիճակում են եւ տասնամյակներով չեն կարողանում այդ վիճակից դուրս գալ: Այս փոփոխությունների նպատակն իբրեւ այն է, որ ամեն բան լինի ավելի հասցեական: Այն չափանիշները, որոնց հիման վրա ընտանիքը համարվում էր աղքատ, շատ հաճախ չէր արտացոլում իրական պատկերը, եւ որոշ ընտանիքներ ստանում էին նպաստ՝ չունենալով դրա անհրաժեշտությունը, սակայն ընտանիքներ էլ կային, որ հացի գումար չունեին, սակայն նպաստառու չէին համարվում: Հետեւաբար, այս փոփոխությունների նպատակն այն է, որ ամեն ինչ լինի հասցեական, իհարկե, կդժվարանամ ասել՝ արդյունավետությունը, այս փոփոխություններով պայմանավորված, կբարձրանա՞, թե՞ ոչ: Ժամանակին, երբ ես նախարար էի, ցանկանում էինք իմանալ, թե որոնք են աղքատության պատճառներն ու հետեւանքները: Օրինակ՝ եթե մարդը կացարանային խնդիրներ ունի՝ տաք ջրի, ջեռուցման խնդիր եւ այլն, եւ պետությունից ստանում է 50 հազար դրամ նպաստ, դա չի նշանակում է, որ նրա տաք ջրի հարցը լուծվեց, փոխվեց բարեկեցությունը: Գուցե դրանով մարդը կարողացավ իր սննդի հարցերը լուծել, բայց, մեծ հաշվով, իր խնդիրները չեն լուծվում: Այսինքն՝ շատ կարեւոր է հասկանալ, թե ինչ կոնկրետ խնդիրներ են առկա, եւ նպաստել, որ մարդիկ դուրս գան այդ վիճակից, այլ ոչ թե իքս գումարներ ստանան, ու վերջ: Օրինակներ շատ կան նաեւ, որ մարդիկ տարիներով նպաստներ են ստացել, սակայն դրա կարիքը չեն ունեցել, անշարժ եւ շարժական գույքը բարեկամների անունով էին գրանցում, անասունները հարեւանների բակում էին մորթում եւ աղքատ ներկայանում: Այս մտահոգությունը միշտ ակտուալ է, թեպետ գույքի առկայությունը մյուս կողմից չի երաշխավորում, որ մարդն աղքատ չէ: Մարդը կարող է ունենալ մեքենա, դաշտից տուն տեղափոխվելու համար, սակայն լինել աղքատ: Ինչու եմ այս մասին խոսում հիմա. որովհետեւ պետության ֆունկցիան ոչ թե այն է, որ աղքատ մարդիկ պետությունից գումար չստանան, այլ այնպես անի, որ աղքատ մարդիկ համակարգից դուրս չմնան: Երբ դնում ես նպատակ, որ մարդկանց ուղղակի պետք է համակարգից դուրս թողնես, որովհետեւ նրանք լավ են ապրում, նշանակում է՝ դու, որպես պետության ղեկավար, համակարգը չես կարողանում աշխատեցնել, քանի որ համակարգի նպատակը մարդկանց օգնելն է, ոչ թե մարդկանց հաշվին գումարներ խնայելը: Պետությունը պետք է ամեն ինչ անի, որպեսզի համակարգից որեւէ կարիքավոր մարդ դուրս չմնա: Աղքատությունն այնպիսի բան է, որ այսօր կա, վաղը գուցե այն վերանա: Որպեսզի հասկանալի լինեն իրական կարիքները, սոցիալական աշխատողները պետք է մշտապես շփումներ ունենան նպաստառու ընտանիքների հետ: Դրվել են չափանիշներ, որոնք իրապես կարող են չբացահայտել՝ ընտանիքն աղքա՞տ է, թե՞ ոչ: Ընտանիքում կարող է բոլորը կրթություն են ստացել կամ մեքենա ունեն, բայց նպաստի կարիք ունեն, չափանիշները պետք է ուղիղ կապ ունենան աղքատության հետ, այլ ոչ թե հենց այնպես, ուղղակի, որպեսզի մարդիկ զրկվեն նպաստներից: Այն, որ փոփոխություններ պետք էին, ես դրա հետ համաձայն եմ, սակայն համակարգը պետք է արագ արձագանքի խնդիրներին»:

ՆՈՒՅՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԳՈՎԱԶԴԵԼՈՒ ՆՈՒՐԲ ԱՐՎԵՍՏԸ

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Խորհրդարանական ընտրությունների մոտենալուն զուգընթաց, ՔՊ-ն ամբողջ թափով կրկին «խոդի է տվել» խոստումների փուլը, չբացված գործարաններն են նորից «բացում», աշխատատեղեր գովազդում, որովհետեւ իրենց գլխավոր մրցակիցը՝ «Մեր ձեւով»-ը, խոսում է գործարաններ ու աշխատատեղեր ստեղծելու մասին:

Հիմա կրկին հիշել են տարիներ առաջ հայտարարված մի գործարանի կառուցման մասին ու այնպես են ներկայացնում, կարծես առաջին անգամ են այդ մասին խոսում: Երեք տարի առաջ Wellar group LLC գործարանի կառուցման մասին ազդարարել էր էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանը: Նա այցելել էր գործարան, որը հագեցած էր եվրոպական առաջատար ընկերություններից ներմուծված նոր սերնդի սարքավորումներով ու հոսքագծերով: Քերոբյանն այդ ժամանակ նշել էր, որ առաջիկայում նախատեսվում է գործարանի առաջին հերթի գործարկումը, եւ կստեղծվի մինչեւ 1500 նոր աշխատատեղ:

Օրեր առաջ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը եւ նրա տեղակալ Էդգար Զաքարյանն են այցելել «Վելլար գրուպ» ընկերության «նոր» կառուցվող շոկոլադի եւ հրուշակեղենի գործարան ու հանդես եկել հայտարարությամբ, որ 3 տարվա ընթացքում նախատեսվում է գործարանի ամբողջական գործարկումը, որի արդյունքում արտադրական ծավալները կհասնեն օրական մինչեւ 200 տոննայի, իսկ աշխատատեղերի թիվը՝ մինչեւ 2 հազարի: Էկոնոմիկայի նախարարը, բնականաբար, նաեւ իր ֆեյսբուքյան էջում է գրել այդ մասին, որ այն լինելու է տարածաշրջանում շոկոլադի ամենամեծ գործարանը: Ընդ որում, ոչ մի խոսք այն մասին, որ դա նոր ծրագիր չէ: Սակայն մարդիկ անմիջապես հիշեցին ու հիշեցրին, որ այս գործարանը մի անգամ էլ են «բացել»:

Էկոնոմիկայի նախարարի տեղակալ **Էդգար Զաքարյանից** հետաքրքրվեցինք՝ ի վերջո ո՞ր փուլում է գործարանը, այն արդեն կառուցվե՞լ է, թե՞ նոր է կառուցվում: «Ինչպես հրապարակման մեջ արդեն նշված է, գործարանը դեռեւս գտնվում է շինարարության փուլում, որտեղ շինարարությունն ավարտված է, այնտեղ այս պահին տեղի է ունենում ներքին տեխնոլոգիական սարքավորումների մոնտաժ: Իրենց ասելով, մինչեւ ամառ՝ հուլիսին, կավարտեն նաեւ մոնտաժման աշխատանքները եւ ամռան վերջին արդեն կսկսեն փորձնական պրոդուկտ տալ: Գործարանը կառուցվելու է 3 փուլով, իմ ասած ժամկետները վերաբերում են 1-ին փուլին: Իրականում բավականին մեծ գործարան է, ըստ ներդրողների ներկայացման, բացի շոկոլադից, այլ քաղցրավենիքներ են արտադրվելու, սկսելու են մի քանի արտադրատեսակից, հետո փուլառփուլ արտադրատեսակներն ավելացնելու են»:

Նախկին եւ ներկայիս նախարարներն աշխատատեղերի բացման տարբեր թվեր են նշում, ի վերջո՝ քանի՞ աշխատատեղ կբացվի՝ 1500, թե՝ 2 հազար: «Մեզ հավաստիացրին, որ գործարանն ամբողջությամբ սկսի աշխատել մոտ 2 տարի հետո: 2 տարի անընդհատ ավելացնելու են արտադրատեսակների ծավալները, եւ 2 տարի հետո, երբ հասնեն իրենց արտադրանքի պիկին, արդեն կունենան 2 հազար աշխատատեղ»: Արտադրանքն արտահանելո՞ւ են, թե՞ պատրաստվում են տեղական շուկայում վաճառել: «Իրականում, ամբողջ գործարանն արտահանման տրամաբանությամբ է արտադրվում, բայց դա չի նշանակում, որ տեղական շուկայում արտադրության վաճառք չի լինի: Ըստ սեփականատերերի՝ բավականին լավ որակի արտադրանք են ստանալու, միջին եւ բարձր որակի, եւ դրանից էլ գնային սեգմենտացիան միջին եւ բարձր կլինի»: Ովքե՞ր են ներդրողները, կառավարությունն ինչ-որ ձեւով աջակցե՞լ է գործարանի բացմանը: «Սեփականատերերը Հայաստանում էին, որ մենք գնացինք: Հայեր են, բայց դրսի ներդրում է: Եվրոպական երկրներում գործունեություն ծավալող բիզնեսմեններ են, որոնք նաեւ ներդրում են անում Հայաստանում: Կառավարության կողմից ներդրում չի եղել, մենք այլ գործիքակազմերով ենք փորձել աջակցել ներդրողներին, որ շահագրգռված լինեն ներդրումներ կատարել. մաքսատուրքից ենք ազատել, նաեւ շահառու են ենթակառուցվածքների ներդրումների դիմած ծրագրին, այսինքն՝ կառավարությունը նպաստել է, որ այդ ներդրումները լինեն, ամբողջությամբ իրենց ներդրումներն են: Կարծեմ՝ 100 մլն դոլար արդեն ներդրում են արել»,- ասաց փոխնախարարը:

ԻՐԱՎՈՒՆՔ

ԵԹԵ ՄԵՆՔ ՉԼՈՒԾԵՆՔ, ՄԵՐ ՈՒԽԱՐԵՆ ՉԵՆ ԼՈՒԾԻ

Սրբազան շարժման առաջնորդ Բագրատ Գալստանյանը, որն իր մի խումբ համախոհներով տեւական ժամանակ է՝ գերեվարված է Փաշինյանի ռեժիմի կողմից եւ մեղադրվում է իբրեւ թե ահաբեկչություն եւ իշխանազավթում իրականացնելու փորձի մեջ, դիմել է հաջորդ շաբաթ Հայաստան այցելող ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսին, որպեսզի նա միջամտի եւ վերջ դնի Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ իրականացվող հալածանքներին ու հետապնդումներին: Այդ մասին տեղեկացրել է Հայաստանում գտնվող Քրիստոնեական համաշխարհային համերաշխություն կազմակերպության նախագահը: Թե ինչու ԱՄՆ փոխնախագահը պետք է նման առաքելություն ստանձնի, որն է նրա անձնական կամ ԱՄՆ պետական շահը Հայ առաքելական եկեղեցու դեմ արշավի կասեցման հարցում, հայտնի չէ: Ենթադրում եմ, որ պարզապես Գալստանյանը մտածում է, թե ամերիկացի պաշտոնյան կարող է առաջնորդվել քրիստոնեական գթասրտությամբ եւ համերաշխությամբ, բայց հազիվ թե:

Երբ տարբեր հասարակական, քաղաքական գործիչներ երկրում ապօրինությունների, մարդկանց անօրեն կալանավորումների, քաղբանտարկյալների առկայության, բռնաճնշումների հարցերով դիմում են տարբեր միջազգային կազմակերպությունների, տարբեր երկրների ղեկավարներին, այդ երկրների հայաստանյան դեսպանատներին, նրանց մեղադրում են Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին պատշաճ չարձագանքելու, այդ անօրեն ու ապօրինի գործողությունները չտեսնելու մեջ, դարձյալ առաջանում է նույն հարցը՝ իսկ ինչո՞ւ նրանք դա պետք է անեն, ո՞րն է նրանց շահագրգռվածությունը, հանուն ինչի՞: Նույն բանը կարելի է ասել այն դեպքում, երբ պահանջ է դրվում Բաքվի բանտերում պահվող եւ ապօրինի դատվող հայերի, ՀՀ քաղաքացիների մասով, նրանց նկատմամբ իրականացվող ապօրինություններին չարձագանքելու առումով:

Տեսակետը, որ այդ կառույցներն ունեն հումանիտար առաքելություն, որ այդ երկրներն իրենց հռչակել են միջազգային հանրություն եւ աշխարհում ժողովրդավարության ու մարդու իրավունքների պաշտպաններ, ունեն ստանձնած մարդասիրական հանձնառություն, նույնպես որեւէ հիմք չէ այդ կառույցներից կամ պետություններից որեւէ աջակցություն ակնկալելու համար: Նույն տրամաբանությամբ՝ Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի իշխանություն կոչվածները եւս ունեն որոշակի հանձնառություններ, ստանձնած առաջին հերթին սեփական հասարակության առաջ՝ պահպանել Սահմանադրությունը, առաջնորդվել օրենքով, պաշտպանել քաղաքացիների ազատություններն ու իրավունքները, սպասարկել հանրային շահը, բայց դա չեն անում: Ինչո՞ւ այն, ինչ չեն անում Հայաստանի իշխանությունները, պետք է անի ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ԵՄ-ի կամ որեւէ այլ երկրի իշխանություն, տարբեր միջազգային կազմակերպություններ: Ինչ է՝ նրանք ավելի՞ արդար են, ավելի՞ մարդասեր, թե՞ մեր մասին ավելի շատ են մտածում: Այդ երկրների հասարակությունները եւս բազմաթիվ խնդիրներ ունեն, դժգոհություններ՝ սեփական իշխանություններից, բայց լսե՞լ եք որեւէ անգամ, որ ԱՄՆ, ԵՄ, Ռուսաստանի կամ որեւէ այլ երկրի քաղաքական կամ հասարակական գործիչ դիմի Հայաստանի իշխանությանը կամ դրա առանձին ներկայացուցչի:

Բոլոր պետություններն առաջնորդվում են սեփական շահերով, եւ այդ միջազգային կազմակերպությունները եւս առաջնորդվում են այն պետությունների շահերով, որոնք դրանք ստեղծել, ֆինանսավորում եւ ուղղորդում են: Եթե նրանց շահերից բխի՝ ճնշում գործադրել Հայաստանի իշխանության վրա, նրանք դա կանեն առանց Հայաստանի քաղաքացիների կամ հանրային գործիչների դիմումների, ինչպես անում էին նախկինում, երբ ամեն առիթով հարձակվում էին իշխանության վրա՝ մեղադրելով մարդու իրավունքների եւ այլ միջազգային սկզբունքների ոտնահարման մեջ, սպառնում պատժամիջոցներով: Եթե դա իրենց չի հետաքրքրում, ապա Հայաստանի բոլոր քաղաքացիները մի խնդրագրի տակ էլ եթե ստորագրեն, նրանք դա չեն անի: Սա պարզ ճշմարտություն է, որը նույնիսկ քննարկման առարկա չէ:

Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր անգամ, երբ մենք դիմում ենք որեւէ երկրի կամ միջազգային կազմակերպության՝ խնդրելով լուծել այն հարցերը, որոնք, որպես հասարակություն, մեր լուծման իրավասության տիրույթում են, մենք նախ ընդունում ենք, որ այդ երկրները եւ կազմակերպությունները գերիշխանություն ունեն Հայաստանի Հանրապետության նկատմամբ, կարող են ինչ-որ բան թելադրել կամ պարտադրել Հայաստանի թեկուզ ապօրինի եւ անօրեն իշխանություններին: Դիմելով այդ երկրներին, նրանց ղեկավարներին եւ միջազգային կառույցներին, խնդրելով լուծել Հայաստանի եւ նրա քաղաքացիների խնդիրները՝ մենք ակամա խոստովանում ենք, որ մենք՝ որպես հասարակություն, անընդունակ ենք լուծելու այդ խնդիրները, անզոր ենք ոչ միայն ազդելու իշխանությունների կողմից կայացվող որոշումների վրա, որն այդպես է, մենք նաեւ անզոր ենք ապօրինի եւ հակազգային իշխանություններին փոխարինել ավելի օրինական, արդար եւ ազգային իշխանությամբ, եւ մեր միակ հույսն արտաքին միջամտությունն է:

Հայաստանին եւ նրա հասարակությանը հուզող խնդիրների լուծումը հնարավոր է միայն մեր միջոցով, երկրում լեգիտիմ եւ օրինական իշխանության ձեւավորման պայմաններում: Մյուս բոլոր տարբերակները եւ փորձերը ոչ միայն արդյունավետ չեն եւ չեն կարող հանգեցնել որեւէ արդյունքի, այլեւ բարոյապես վնասակար են, կասկածի տակ են դնում մեր պետական ինքնիշխանությունը, մեզ վերածում են մի հաշմանդամ հասարակության, որն իր բոլոր հարցերի եւ խնդիրների լուծումը փորձում է գտնել դրսում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԿԱ՛Մ ԵՍ ԿԼԻՆԵՄ ՎԱՐՉԱՊԵՏ, ԿԱ՛Մ ՀԱՅԱՍՏԱՆԸ...

Եվ ուրեմն, կամ ինքը կլինի վարչապետ, կամ Հայաստանը վարչապետ չի ունենա: 8-ամյա վաղեմության այս ապուշությունը, պատկերացրեք, այսօր շատ մոտ է իրականություն դառնալուն: Մի փորձեք ինձ համոզել, որ դրանք 8 տարի առաջ փողոցում ասված խոսքեր են, երբ նա դեռ հեղափոխություն էր անում, երբ դեռ պարզ չէր, թե ԱԺ-ն ում կընտրի վարչապետ: Այդ ժամանակ նա արդեն գիտեր՝ ով է ինքը, ովքեր են իրեն բերում իշխանության, ու նաեւ՝ որ իր վարչապետ դառնալն անխուսափելի է այլեւս: Իսկ թե ինչու նման հայտարարություն արեց՝ սա արդեն այլ հարց է: Ի՞նչ էր ուզում ասել դրանով:

Առաջարկում եմ, նախ, բիրդան վարչապետ դարձած այդ արարածի քաղաքական գիտելիքների մասին ձեր պատկերացումները ծալել ու դնել մի կողմ: Իմ համեստ կարծիքով՝ 8 տարի առաջ նա ուղղակի չէր կարող նման գիտելիքներ ունենալ, իսկ այդ գիտելիքների վրա հիմնված բառապաշար՝ առավել եւս: Հետեւաբար, խնդրո առարկա միտքը ես ավելի շուտ սադրանք կհամարեի, քան նորմալ մարդու հիպոթեզ, այսինքն՝ ենթադրություն, որն ապացույցի կարիք ունի, բայց եւ ժխտված էլ չէ:

8 տարի անց այդ սադրանքին (շանտաժին) անդրադառնալուս պատճառները մեկը, երկուսը չեն: Հիշեք, թե ինչ Հայաստան ստացավ նա 2018-ին եւ այսօր ինչ է թողել այդ Հայաստանից: Անհամեմատելի է: Շանտաժը, սակայն, որ կամ ինքը կլինի վարչապետ, կամ Հայաստանի Հանրապետությունը վարչապետ չի ունենա, դեռ նստած է մարդկանց գլխում եւ դուրս չի գալիս: Այս վախի մթնոլորտը, որ տիրում է Հայաստանում, հենց դրա հետեւանքն է: Ինքը չլինի վարչապետ՝ պատերազմ կսկսվի, ինքը չլինի վարչապետ՝ խաղաղության համաձայնագրի վրա կարող ենք խաչ քաշել, ինքը չլինի վարչապետ՝ Թրիփը չի աշխատի, ինքը չլինի վարչապետ՝ կոռուպցիան չի վերանա, ինքը չլինի վարչապետ՝ Եկեղեցին ձեռից կգնա, ինքը չլինի վարչապետ՝ առողջապահությունը կվերանա, ինքը չլինի վարչապետ՝ Հայաստանում բարձրագույն կրթություն ու գիտություն չեն լինի... Մի՞թե ապուշություն չէ այս ամենը եւ շանտաժ: Օրերս էլ պարծեցել էր, թե ներգաղթ է սկսվել՝ առանց հասկանալու, որ ներգաղթը դեռ հայրենադարձություն չէ: Թիմի անգետիկներն էլ լցվել են Ֆեյսբուք, թե բա՝ եթե ինքը չլիներ, ներգաղթ չէինք ունենա: Լո՞ւրջ... Եվ ովքե՞ր են այդ ներգաղթյալները... Հո՞ղ եք նախապատրաստում հավելյալ տպագրված կեղծ անձնագրերով թուրքերին Հայաստան լցնելու համար: Դե, իհարկե, եթե ինքը չլիներ վարչապետ, ադրբեջանցիների վերադարձ «արեւմտյան ադրբեջան» տեղի չէր ունենա...

Շատ չերկարացնեմ: Ինքն ասել է՝ կամ ես կլինեմ վարչապետ, կամ Հայաստան չի լինի: Բանասերները, կարծում եմ, ինձ չեն մեղադրի հայերենին չտիրապետելու մեջ: Ուրիշ ի՞նչ կարող է նշանակել «կամ ես կլինեմ Հայաստանի ղեկավարը, կամ Հայաստանը ղեկավար չի ունենա»: Ինչպե՞ս է կոչվում այն երկիրը, որը ղեկավար չունի: Կա՞մ այդպիսի երկիր, պետություն կամ դրա նման մի ուրիշ բան: Ոչխարներն էլ արդեն հավատում են նրա ցնդաբանությանը՝ արաաաաա, որ ինքը չլինի, Հայաստանը ոտով-գլխով կկորչի: Էլ չեն խորանում, թե ինչպես եղավ, որ մի կիսախելագար Հայաստանում դարձավ ղեկավար ու իրենց հասցրեց այս օրվան: Ինչ ուզում եք, ասեք Լեւոն Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի ժամանակների մասին... Նման ծանր կացության մեջ հայ ժողովուրդը չի եղել, վախի այսպիսի մթնոլորտ չի եղել, որ մարդն իր իրավունքներից այսպես հրաժարվեր՝ չի եղել: Համատարած վախ եւ անտարբերություն իրավապահ համակարգի սանձարձակությունների հանդեպ... Հայը եզի հայացքով կհետեւե՞ր, թե ինչպես են քանդում իր հավատի տունը: Այսօր ոմանք լուռ դիտում են այդ ամենը ու դեռ մտքում էլ որոճում, որ եթե այդ արարածը չլինի վարչապետ, Հայաստանը վարչապետ չի ունենա:

Նոր ընտրությունների գնում ենք ծանր զգացողություններով: Կհաջողվի՞ ընդդիմությանը՝ կոտրել ինքզինքը ամեն ինչի սկիզբ հայտարարած շառլատանի այդ «միտքը», բացել հանրության աչքերն այդ մեծ ստի ու շանտաժի վրա եւ ապացուցել, որ եթե նա չլինի վարչապետ, ապա ամեն ինչ կընկնի իր հունի մեջ, եւ մենք թե՛ արժանապատիվ խաղաղություն կունենանք, թե՛ նորմալ իշխանություն եւ թե՛ նորմալ պետություն: Մարդկանց պետք է հանել այս էշացման վիճակից: Եվ ոչ միայն հասարակ մարդկանց: Այսօր ամբողջական պետական կառույցներ են այդ վիճակում՝ ուժային, տնտեսական, գիտա-մշակութային, ուսումնական, առողջապահական: Մեծահարուստների մասին էլ բան չկա ասելու: Հավայի փողի տոպրակների պես վեր են ընկել տեղները: Մարդ արդեն մտածում է, որ սրանք էդ փողերն աշխատել են այս վարչապետի շնորհիվ ու վախենում են կորցնել, եթե ուրիշ վարչապետ լինի:



Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԲԱՔՈՒ

ԱԼԻԵՎԸ ԲՈԼՈՐԻՑ ԹԱՔՈՒՆ ԻՐԵՆՈՎ ԱՐԵՑ ՆԱԽԻՋԵՎԱՆԸ

Իլհամ Ալիեւը որոշել է փոխել Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության ստատուսը՝ կարեւոր հանգամանք, որն ուշադրության չարժանացավ հայկական ԶԼՄ-ների կողմից: Այնինչ նոր աշխարհակարգի ձեւավորման արդյունքում ստեղծված քաոսից Ադրբեջանի իշխանությունները որոշել են օգտվել: Եվ այսպես. սահմանադրությունից հեռացվում է 1921 թվականի մարտի 16-ին կնքված Մոսկվայի եւ 1921 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված Կարսի պայմանագրերի մասին հիշատակումը, ինչն ամբողջությամբ փոխում է պատմական հայկական բնակավայրի իրավական կարգավիճակը:

Հարավային Կովկասի հետազոտությունների կենտրոնի քաղաքագետ, ադրբեջանական քարոզիչ Ֆարհադ Մամեդովը Minval Politik-ի հետ զրույցում անկեղծորեն հայտարարում է, որ այս փոփոխությունը հնարավոր է եղել կատարել՝ օգտվելով թե Ռուսաստանի, թե Իրանի՝ իրենց համար գոյաբանական խնդիրներով զբաղվածությունից: Իհարկե, Մամեդովը «զավթել» բառով չի բնորոշում իրենց գործողությունները, սակայն հայտարարում է, որ Ադրբեջանն օգտվեց հարմար պահից եւ կարողացավ փոխել Նախիջեւանի կարգավիճակը: Սահմանադրության խմբագրված նոր տարբերակում նշվում է, որ Սահմանադրության հիմքում դրվել են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը վերականգնելու մասին 1991 թ. սեպտեմբերի 30-ի հռչակագիրը, 1991 թ. հոկտեմբերի 18-ի սահմանադրական ակտն ու 1995 թ. Ադրբեջանի Հանրապետության սահմանադրությունը: Հիշեցնենք, որ այս նախագիծը երկրորդ լսմամբ ընդունվել էր Ադրբեջանի խորհրդարանի կողմից:

«Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը սահմանում էին Թուրքիայի եւ Խորհրդային Միության միջեւ սահմանը: Երկրորդ. դրանք սահմանում էին Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության իրավական կարգավիճակն Ադրբեջանի կազմում: Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության նկատմամբ պարտավորություններ ունեին թե՛ Խորհրդային Ռուսաստանը, այսինքն, հետագայում՝ նաեւ ԽՍՀՄ-ը, թե՛ Թուրքիան: Եվ եթե Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի հղումները հանվեն Նախիջեւանի Հանրապետության սահմանադրությունից, դա նշանակում է, որ ՆԻՀ իրավական կարգավիճակը կարող է փոխվել կամ լիովին վերացվել՝ տարածքը վերածելով Ադրբեջանի Հանրապետության կանոնավոր վարչական շրջանի: Այսպիսով, Ադրբեջանը հրաժեշտ է տալիս իր խորհրդային ժառանգությանը: Երկրորդ. սա տարածաշրջանում նոր իրողությունների արդյունք է, իրողություններ, որոնք ձեւավորվում են Ադրբեջանի Հանրապետության՝ իր տարածքի նկատմամբ լիակատար ինքնիշխանության հիման վրա»,- բացատրում է Ֆարհադ Մամեդովը:

Մամեդովը նշում է, որ այս փոփոխությունն առաջին հերթին շոշափում է պայմանագիրը կնքող կողմերին՝ Ռուսաստանին եւ Թուրքիային: Բնականաբար, Մամեդովը շեշտում է, որ Թուրքիան որեւէ կերպ չի կարող դեմ լինել Նախիջեւանի զավթմանն Ադրբեջանի կողմից, իսկ Ռուսաստանում հաստատ չեն ուրախանա այս փաստից: «ԽՍՀՄ-ի իրավահաջորդն այսօր Ռուսաստանն է, իսկ Թուրքիան նույնն է մնացել, մենք կարող ենք վստահ հայտարարել, որ Թուրքիան որեւէ կերպ դեմ չի արտահայտվի այս քայլին, իսկ Ռուսաստանը որեւէ կերպ կարող է արտահայտել իր դիրքորոշումը: Մենք պետք է հասկանանք, որ միջազգային իրավիճակն այնպես է դասավորվել, որ այս պահի դրությամբ որեւէ քայլ անելու շանս Ռուսաստանն ուղղակի չունի: Չնայած Իրանը պայմանագրերից որեւէ մեկի կողմ չի հանդիսանում, սակայն իրենց քաղաքականության մեջ Նախիջեւանը միշտ առանձնահատուկ դիրք է զբաղեցրել: Եվ դա հաճախ շեշտվում էր ու դյուրագրգիռ արձագանք էր ստանում Բաքվում: Կարծում եմ, որ այսօր իրանական իշխող խմբի առաջ ավելի կարեւոր ու բարդ հարցեր են կանգնած, որպեսզի ինչ-որ կերպ դեմ արտահայտվեն այս փոփոխությանը»,- հայտարարում է ադրբեջանցի քարոզիչը:

Մամեդովը փաստացի հայտարարում է, որ Ալիեւը, օգտվելով իր հավատակից մուսուլման Իրանի դեմ ծագած գոյաբանական վտանգներից, նաեւ Ռուսաստանի՝ Ուկրաինայում պատերազմի մեջ ներքաշված լինելու հանգամանքից, հստակ գիտակցելով, որ այս երկու երկրները հերթական զավթողական քայլը որեւէ կերպ չեն կարողանալու զսպել, հենց ադրբեջանցիների սիրած բառով՝ բորենիների պես իրենցով են արել Նախիջանի Ինքնավար Հանրապետությունը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Ադրբեջանում ուժեղացնում են կենտրոնաձիգ իշխանությունը

Ադրբեջանի խորհրդարանը փետրվարի 2-ին հաստատեց Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության հիմնական օրենքում կատարված փոփոխությունները: Հանվեցին 1921-ին կնքված երկու՝ Կարսի եւ Մոսկվայի պայմանագրերի մասին հիշատակությունները: Դրանցով էր ժամանակին ամրագրվել Հարավային Կովկասի ռազմաքաղաքական կարգավիճակը՝ ռուսական եւ օսմանյան կայսրությունների անկումից հետո: Հիմա Ադրբեջանը փորձում է հրաժարվել այդ ժառանգությունից՝ գրում է քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը: Ադրբեջանը փորձում է ջնջել ամեն բան, ինչն ուղղակի կամ անուղղակի կարող է վկայել անցյալում իր կախվածության կամ սուբյեկտայնության բացակայության մասին: Սակայն միայն ԽՍՀՄ հիշողությունից ձերբազատվելը չէ հարցը: Բանն այն է, որ Նախիջեւանի ԻՀ-ն երկար ժամանակ գտնվում էր Լեռնային Ղարաբաղի ստվերում: Այս տարածքը, որն ընդգրկում է 5,5 հազ. քառ. կմ, Ադրբեջանի հիմնական տարածքից բաժանված է Հայաստանով եւ ունի ընդհանուր սահման Իրանի ու Թուրքիայի հետ: Երկրամասը կարեւոր նշանակություն է ունեցել Հարավային Կովկասի ռեգիոնալ համակարգում եւ այժմ էլ ունի: Հեռավոր 1990 -ին երկրամասի Գերագույն խորհուրդը որոշում է կայացրել՝ դուրս գալ ԽՍՀՄ կազմից: Դրանից ավելի վաղ ԼՂԻՄ-ն էր հայտարարել Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս գալու մասին եւ Աբխազիան: 1991-ին Նախիջեւանը դարձավ այն պլացդարմը, որի վրա հիմնվելով՝ Հեյդար Ալիեւը վերադարձավ մեծ քաղաքականություն: Նախիջեւանից նա 93-ին հաղթանակած վերադարձավ Բաքու: Հետագայում Նախիջեւանի ԻՀ-ն պահպանեց իր հատուկ կարգավիճակն Ադրբեջանի կազմում՝ դառնալով որոշակի «պատտերն» ԼՂ-ի համար: Սակայն հիմա դրա անհրաժեշտությունն այլեւս չկա՝ Ադրբեջանը գրավել է ԼՂ-ն ամբողջությամբ եւ եթե նախկինում՝ բանակցությունների ժամանակ, Ադրբեջանը հայկական կողմին առաջարկում էր «ամենաբարձր հնարավոր ինքնավարություն Ադրբեջանի կազմում», հիմա այդ խոսույթն ակտուալ չէ այլեւս: Ու այս տրամաբանությամբ՝ Նախիջեւանի ինքնավարությունն էլ ակտուալ չէ այլեւս: Ավելին, Բաքուն որդեգրել է պետական համակարգի ցենտրալիզացիայի կուրս, ինչի վկայությունը Նախիջեւանի ԻՀ նոր սահմանադրության նախաբանն է, որտեղ գրված է, որ այն Ադրբեջանի անբաժանելի մասն է: Նախատեսվում է Նախիջեւանի հատուկ ներկայացուցչի պաշտոն ստեղծել Ադրբեջանի նախագահի վարչակազմում, որը կհամակարգի Ադրբեջանի նախագահի՝ երկրամասում իրականացվող ծրագրերը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԵՆԴԱՆԱՍԵՐՆԵՐԸ ԳԼՈՒԽՆԵՐԸ ՊԱՏՈՎ ԵՆ ՏԱԼԻՍ

Վերջերս գրել էինք, որ «Դոգմա» կենդանապաշտպան կազմակերպության անդամները մեկնել էին Սիսիան, այնտեղ գտել 3 հղի շուն, որոնց ականջներին «բիրկաներ» են եղել, իբր՝ ստերջացված են Սիսիանի համայնքապետարանի ծրագրով: «Դոգմա» կենդանապաշտպան կազմակերպության անդամ Գոհար Տեր-Անտոնյանը շներին տեղափոխել է Երեւան, ստերջացումը կազմակերպել: Նա ասել է, որ դա համայնքապետարանի եւ ստերջացնող կազմակերպության հնարավոր կոռումպացված լինելու, փողերի լվացման մասին է վկայում:

Զրուցել ենք Սիսիանում շների ստերջացման գործընթացն իրականացրած «Վիկա Հակոբյան» ԱՁ ներկայացուցիչ, անասնաբույժ, Իջեւանի Լուսաձոր գյուղի բնակիչ **Էդվարդ Նազարյանի** հետ: Նա մեզ հետ զրույցում ասաց, որ Քննչական կոմիտեի Սիսիանի քննչական բաժինը կենդանապաշտպան կազմակերպության ահազանգով, վերոհիշյալ դեպքի առթիվ քննություն է իրականացնում, ինքը ցուցմունք է տվել, եւ հայտարարեց. «Ինչ իմաստ կար՝ մեր խմբով Իջեւանից մեկնել Սիսիան, այնտեղ տեւական ժամանակ աշխատել, շներին վիրահատել, սակայն դրանց չստերջացնել»: Նա պնդում է, որ ստերջացրել են շներին, իսկ հղիացած շներն իրենց հետ կապ չունեն, իրենց վիրահատած շների ականջների պիտակների եւ հղիացած շների ականջների պիտակների կոդերը տարբեր են: Նազարյանը կենդանասերների կողմից իրենց ներկայացված մեղադրանքներին կոպիտ է արձագանքում. «Իրենք գլուխները պատովն են տալիս», եւ ասում է, որ իրենց կազմակերպության բարի համբավն արատավորելու համար իրավական գործընթաց են սկսում: Պատմում է, որ ինքը շներին վիրահատում է՝ արուների ամորձիները, էգերի արգանդը հեռացնում, որ իրենց՝ «Վիկա Հակոբյան» ԱՁ-ի աշխատանքն ամբողջությամբ օրինական է՝ փաստաթղթավորված, կան շների վիրահատությունների վերաբերյալ լուսանկարներ, այլ ապացույցներ: Օրինակ, Սիսիանի բնակչուհիներից մեկը՝ Հասմիկը, խնդրել էր իր խնամակալության ներքո գտնվող 4 էգ եւ 1 արու շներին վիրահատել: Ինքը հրահանգել է այդ շներին տեղավորել ավտոմեքենայի մեջ եւ տեղափոխել վիրահատության վայր: Բայց Հասմիկն ասել է, որ իր կարի արտադրամասում հնարավոր է պայմաններ ստեղծել՝ շներին վիրահատելու համար, որտեղ էլ եւ կատարվել է վիրահատությունը: Նազարյանն ասում է, որ Հասմիկի տված տեղեկանքն առկա է, որ գործընթացը ճիշտ է իրականացվել:

Էդվարդ Նազարյանը խիստ բացասական է վերաբերվում շնասերների գործունեությանը. «Համացանցում հանգանակություն արեցին 2 շների Երեւան տեղափոխելու, ստերջացան համար: Այդ նպատակով 25 հազար դրամ ծախսվեց տրանսպորտի համար, բա մնացած փողերն ինչպես ծախսվեցին... 55 օրվա հղի շանը բերեցին Երեւան, վիրահատեցին: Մինչդեռ այդ շունը 6 օրից պետք է ծներ: Նման վիրահատությունն անթույլատրելի է»: «Վիկա Հակոբյան» ԱՁ-ն, 4-5 այլ կազմակերպությունների հետ, համայնքապետարանների հայտարարած՝ շների ստերջացման 7 տենդեր է շահել, միայն Չարենցավան քաղաքում 200 շուն պետք է վիրահատեն, համայնքապետարանների ծախսը՝ ստերջացվող մեկ շան հաշվով, կազմում է 23-27 հազար դրամ: Լուսաձորցի անասնաբույժը հերքում է կենդանասերների այն մեղադրանքները, թե իրենք վիրահատությունները ոչ ստերիլ պայմաններում են կատարում: Ասում է՝ մի՞թե պատերազմի ժամանակ զինծառայողների վիրահատություններն իդեալական ստերիլ պայմաններում են արվում: Եվ հավելում է, որ շներին ստերջացնում են, սակայն դա ամբողջությամբ չի լուծում թափառող, անտեր շների խնդիրը, սոված շները հարձակվում են մարդկանց վրա: Նրա խոսքով՝ 2025թ. մարտին Սիսիանում շները հարձակվել են 14 տարեկան երեխայի՝ Արցախում վառելիքի պահեստի պայթյունից զոհված ծնողների զավակի վրա, երեխայի կրծքավանդակի ձախ հատվածն ու ազդրը վնասել: Սիսիանի 714 բնակիչ ստորագրահավաքի է մասնակցել այն բանից հետո, երբ շունը հարձակվել է հղի կնոջ վրա, կինն ընկել է՝ վիժել: Էդվարդ Նազարյանի վկայությամբ, Իջեւանում անտեր շունը հարձակվել՝ բնակիչներից մեկի 100-ից ավելի բադերն է ոչնչացրել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Կառավարության ծրագրի անունը չգիտեն, հայերենին չեն տիրապետում

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում հունվարի 30-ից տեղադրված տեղեկատվությունը սկսվում է այսպես. «ՀՀ կառավարության կողմից, «300 մանկապարտեզ, 500 դպրոց» ծրագրի շրջանակներում, ամբողջությամբ վերանորոգվում է Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզը: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 128.5 մլն դրամ»: Կից տեղադրված է Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզի վերանորոգման մասին տեսանյութ:

Մի ամբողջ համայնքապետարան, եւ ոչ ոք չի նկատել, որ կառավարության ծրագրի անունը սխալ է գրված՝ ոչ թե «300 մանկապարտեզ, 500 դպրոց», այլ հակառակը՝ «300 դպրոց, 500 մանկապարտեզ»: Առանց այդ էլ կառավարությունը խախտել է այդ ծրագիրը՝ դրանցում ընդգրկված դպրոցների ու մանկապարտեզների թվի, շենքերի կառուցման, նորոգման ժամկետների առումով: Բայց պարզվում է՝ մարզերում չգիտեն անգամ, թե ինչ ծրագիր է իրականացվում: Եվ սա վրիպակ չէ, որովհետեւ նույն սխալը կրկնվել է նաեւ համայնքապետի էջում: Դավիթ Սարգսյանը հունվարի 31-ին Ֆեյսբուքի իր էջում լուր է տեղադրել Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզի վերանորոգման մասին. ««300 մանկապարտեզ, 500 դպրոց» ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից վերանորոգվում է Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզը»: Այսինքն, համայնքապետարանում չգիտեն, որ խոսքը 300 դպրոց եւ 500 մանկապարտեզ նորոգելու մասին է, այլ ոչ թե հակառակը: Եվ այս անփույթ, անպատասխանատու գործելաոճը դրսեւորվում է ամեն ինչում:

Սխալները Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնական կայքում շատ են: Հունվարի 27-ին կայքում տեղեկատվություն է տեղադրվել. «Հունվարի 27-ը հանուն մեր հայրենիքի համար զոհվածների հիշատակի օրն է» վերնագրով: «Հանուն հայրենիքի» նշանակում է՝ հայրենիքի համար, այսինքն՝ կամ պետք է գրվի «հայրենիքի համար զոհվածների հիշատակի օր», կամ՝ «հանուն հայրենիքի զոհվածների հիշատակի օր»: Նույն կայքում հունվարի 20-ին, 21-ին եւ 22-ին տեղադրվել են տարբեր նյութեր, բոլորը՝ նույն վերնագրով. «Մասնակցային բյուջետավորման գործընթացի մասին»: Դուք ուրիշ վերնագիր չգիտեք:

Դիլիջանի համայնքապետարանի այս փնթի աշխատանքի համար, սակայն, համայնքի բյուջեից ողջ աշխատակազմը դրամական պարգեւատրումներ է ստացել անցած տարի:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՐԴ

Հայրը բրնձի հատիկից 1200 անգամ փոքր քանդակներ էր պատրաստում, որդին՝ վիթխարի կոթողներ

Լոռիում զարմանահրաշ մարդիկ կան: Վանաձորի հարավային անտառեզրին՝ Բուսաբանական այգու հարեւանությամբ, կարելի է հանդիպել նրանցից մեկին՝ երիտասարդ, շնորհալի քանդակագործ Արա Տեր-Հովհաննիսյանցին: Նրա «արվեստանոցի» տանիքը բաց երկինքն է, լույսն ու ջերմությունը ստանում է արեգակի շողերից, իսկ օդափոխության «համակարգը» գործի են գցում քամին ու զեփյուռը: Այստեղ քեզ զգում ես խորհրդավոր աշխարհում. միայն քանդակագործի մուրճն ու խոհուն միտքն են «սեփական»:

«Ծերունի ավազակներ» անվանակոչված քողտիկում ժամանակ անցկացնող մարդիկ, շրջակայքի բնակիչներն ուշիուշով հետեւում են քանդակագործի նոր մտահղացումներին. կոթողներ, արձաններ, հուշարձաններ, կիսանդրիներ, խաչքարեր: Վերջին շրջանում բազմաթիվ հետաքրքրասերներ են այցելում՝ տեսնելու, թե ինչպես է վերջնական տեսքի բերվում յուրաքանչյուր նոր գործ: Այս մեկը 7-ամսյա մաքառումների արգասիք «Խորհրդավոր ընթրիք» քարակերտ կտավն է:

Մեծն վարպետ Միքելանջելոյի հանրահայտ ստեղծագործությունն այս քանդակումշլացուցիչ սպիտակ, մաքրամաքուր մարմարով է կերտվում: Քանդակագործի մուրճը քարի խորքից վեր է հանել ու իմաստավորել ընթրիքի աստվածային խորհուրդը: Այս գործի գեղարվեստական արժանիքների մասին թող խոսեն արվեստաբանները, բայց մի բան ակնհայտ է. նման աննախադեպ գործ ձեռնարկելու համար անհրաժեշտ են մեծ համարձակություն ու ինքնավստահություն:

Սակայն սա քանդակագործի առաջին համարձակ նախաձեռնությունը չէ: Նա Քրիստոսի եւ առաքյալների թեմային անդրադարձել է տարբեր չափերի ու որակի քարերի վրա՝ տուֆ, ֆելզիտ, գրանիտ, բազալտ: Այդ գործերը վաղուց գտել են իրենց տերերին, այս ստեղծագործության նկատմամբ եւս հետաքրքրություն կա: Միայն թե քանդակագործը ցանկանում է, որ իր նոր աշխատանքը ցուցադրվի ոչ թե բարձր պարիսպների ներսում՝ մասնավոր անձի տանը, այլ հասանելի լինի հանրությանը:

Ինչպես երկու տասնյակից ավելի նրա քանդակներն ու արձանախմբերը, մատուռի քանդակազարդ խոյակները (որոնց վրա պատկերված են հայոց 16 եկեղեցիները), խաչքարերը՝ տարբեր գունազարդումներով ու մտահղացումներով, Քրիստոսի արձանը, «Կտակարանը»՝ «Հայր մեր» էջով, «Հայոց պատմություն» գիրքը՝ մեր թագավորների եւ զորավարների քանդակազարդ էջերով… Այս բոլոր աշխատանքները տարիների տքնաջան աշխատանքի արդյունք են եւ այսօր զարդարում են մարզկենտրոնին մերձակա Մեղրուտ գյուղի մոտակայքում գտնվող, Կապուտան կոչվող հանգստյան գոտու հուշահամալիրը:

Քանդակագործի «արվեստանոցի» շուրջ յուրօրինակ բացօթյա թանգարան է, որտեղ ցուցանմուշները մշտապես փոխվում են: Հայոց մեծերին պատկերող 30-ից ավելի աշխատանքներ իրենց հաստատուն տեղն ունեն արվեստանոցամերձ բազալտե հենապատի վրա: Հերթական մեծության ժառանգությանը ծանոթանալուց հետո քանդակագործն իր թանգարանը համալրում է նոր աշխատանքներով, սակայն ոչ մի ցուցանմուշ չի վաճառում: Նրա համար դրանք «մնայուն արժեքներ են»:

Տարիներ առաջ լոռեցի ճանաչված գրող, Վախթանգ Անանյանի անվան մրցանակի դափնեկիր Վալտեր Թորոսյանը լրագրողիս առաջարկեց ծանոթանալ այս զարմանահրաշ երիտասարդի հետ եւ հետաքրքրությունս բորբոքելու նպատակով ընդգծեց. «Շատ համարձակն է. առանց էսքիզի ու գրաֆիկի մխրճվում է քարի մեջ»: Քանդակագործն ինձ համար բացեց իր գաղտնիքը. «Նայում եմ, մտքով տեսնում՝ ինչ է թաքցնում քարը ներսում, հետո մուրճով բացում եմ տեսածս պատկերը»:

Այդպես է կերտվել հայուհու ութ մետրանոց արձանը, որն իր բարձրությամբ միակն է երկրում: Մայր Հայաստանը խորհրդանշող այս քանդակը պատվանդանի հետ ունի 17 մետր բարձրություն եւ տեղադրված է Կապուտանի մատուռի հարեւանությամբ: Այդպես է ստեղծվել նաեւ «Առյուծ Մհերը ձեւում է առյուծին» հսկայական արձանը՝ միակտոր, երեք տոննա քաշ ունեցող քարից: Նրա բազմաթիվ խաչքարերը զարդարում են Հայաստանի, ՌԴ, Ղազախստանի, Իտալիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի եւ այլ երկրների մեծ ու փոքր քաղաքներ: Հիշատակման արժանի է նաեւ նրա վերջին գործերից մեկը՝ «Հայկական գամփռ» վիթխարի քանդակը, որը, որպես հավատարիմ պահապան, հսկում է մայրաքաղաքի մուտքը՝ Սեւան-Երեւան մայրուղու աջ եզրին:

Ինչպե՞ս դարձավ Արա Տեր-Հովհաննիսյանցը քանդակագործ: Այցելեք Դսեղում Մեծն Լոռեցու տուն-թանգարան, էքսկուրսավարը ձեզ կտրամադրի այն միկրոսկոպը, որով կտեսնեք անզեն աչքով անտեսանելին՝ ոսկու հատիկի վրա արարված Հովհաննես Թումանյանի դիմաքանդակը: Դա մեր քանդակագործի հոր՝ հայտնի բռնցքամարտիկ, սպորտի վաստակավոր վարպետ, վաստակավոր մարզիչ Ալբերտ Տեր-Հովհաննիսյանցի ստեղծագործությունն ու նվերն է թանգարանին:

Ավելորդ է ասել, որ քանդակելու սերը նրան փոխանցվել է հենց տաղանդաշատ միկրոքանդակագործ հորից: Ալբերտ Տեր-Հովհաննիսյանցը միկրոքանդակները տեղադրում էր ասեղի անցքի, մազի մեջ, որոնք տեսանելի են միայն մանրադիտակով: Ոսկու՝ աչքի համար աննկատելի հատիկներից պատրաստված նրա քանդակները բրնձի հատիկից փոքր են 1200-1500 անգամ: Հոր ավելի քան հարյուր աշխատանքներ ցուցադրվել են աշխարհի բազմաթիվ երկրներում:

Կրտսեր որդին՝ Արազը, շարունակում է հոր գործը: Նա մշտապես եղբոր կողքին է եւ եղբոր որդիների՝ Արաբոյի ու Արամեի հետ վաղուց դարձել է «անտառեզրի բնակիչ»: Նրանք միասին շարունակում են ստեղծել խաչքարեր ու արձաններ:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«Սպանություն արեւելյան ճեպընթացում»

Ագաթա Քրիստիի «Սպանություն արեւելյան ճեպընթացում» դետեկտիվ ժանրի վիպակը կարելի է համարել 20-րդ դարի դետեկտիվի ամենից հայտնի գործերից մեկը, որը նաեւ բազմաթիվ անգամներ է էկրանավորվել: Առաջին էկրանավորումը եղել է գրքի հրատարակումից մոտ չորս տասնամյակ անց: Մյուս էկրանավորումները եղել են 21-րդ դարի ընթացքում: Էկրանավորումների բազմազանության մեջ, կարծում ենք, ամենից հաջողվածներից մեկը Դեւիդ Սուշեի՝ Էրքյուլ Պուարոյի կերպարի մարմնավորմամբ կատարվածն է: Կինոնկարի եւ վեպի սյուժեում հետեւյալն է. 1930 թվականին Միացյալ Նահանգներում հանգսթերներն առեւանգում են Արմսթրոնգների ընտանիքի մանկահասակ աղջիկ երեխային՝ Դեյզիին: Պահանջում են փրկագին, ստանում են, սակայն սպանում են երեխային: Նկատենք, որ այս մասը պատմական վավերական իրադարձություն է: Ագաթա Քրիստին հիմնվել է այն ժամանակներում հայտնի օդաչու Չարլզ Լինդբերգի ընտանիքի հետ տեղի ունեցած դժբախտության վրա: Լինդբերգը, հիշեցնենք, առաջին օդաչուն էր, որ 1927 թվականին առանց ընդմիջարկության թռավ Ատլանտյան օվկիանոսի վրայով: Այդ ողբերգության հետեւանքով մահացավ մի քանի մարդ՝ աղջկա ծնողները, դայակը: Մինչդեռ սպանության մեղավոր Քասեթին անպատիժ մնաց: Այն ժամանակների Ամերիկայում հեշտ էր կաշառել դատավորներին եւ դատախազներին: Ու չգտնելով արդարություն՝ ընտանիքի բարեկամներն ու հարազատները, նաեւ՝ ծառայողները, որոշում են իրենք իրականացնել այդ արդարադատությունը: Կարողանում են դասավորել այնպես, որ Քասեթին, որ այլ մարդու անունով էր ապրում, հայտնվում է Ստամբուլից Կալե մեկնող արեւելյան ճեպընթացում: Ճանապարհին՝ Եվրոպայի ետնաբակ համարվող Հարավսլավիայում, նրանք սպանում են Քասեթին եւ, ըստ պլանի, փորձում ամեն բան բարդել իտալական մաֆիայի վրա: Սակայն գնացքում հայտնվում է Եվրոպա վերադարձող Էրքյուլ Պուարոն, որն էլ հետաքննում է գործը եւ պարզում ամեն բան, սակայն խնայում է ընտանիքի վրեժը լուծածներին եւ պաշտոնական մարմիններին ներկայացնում է մաֆիայի տարբերակը: Կինոնկարն ունի հաջողված երաժշտական ուղեկցություն, որը ողջ ֆիլմի ընթացքում դիտողին պահում է լարված էմոցիոնալ վիճակում: Հատկապես հետաքրքիր են ճշմարտությունն ասել-չասելու դիլեմայի առաջ կանգնած Պուարոյի ներքին պայքարն ու ապրումները, որոնք փայլուն կերպով է էկրանին փոխանցում Դեւիդ Սուշեն:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Օրենքն ու Սահմանադրությունը հանկարծ դարձան «իրենք»: Հրաման իջեցվեց՝ սրբազան հայրերը չպետք է բացակայեն երկրից: Նպատակը պարզ է՝ խոչընդոտել Եպիսկոպոսաց ժողովի կայացմանը Ավստրիայում: Դատախազը մեղադրանք առաջադրեց, քննիչը «մոգոնեց» հանցակազմը, դատավորը վճիռ կայացրեց, ոստիկանությունը գործի անցավ: Բայց «կարված-կարկատված» որոշման հեղինակը մեկն է՝ մարդ-կատաստրոֆա: Թեեւ փաստաթղթերում նրա ստորագրությունը չկա: Ինքը կապ չունի: Այս իշխանության ամենավտանգավոր նորարարություններից մեկը «անանձնական պատասխանատվության» համակարգն է՝ ոչ ոք ոչինչ չի որոշում, բայց ամեն ինչ որոշված է, ոչ ոք չի հրամայում, բայց բոլորը կատարում են: Ոչ մի փաստաթուղթ չի ստորագրվում, բայց կյանքեր ու ճակատագրեր են խորտակվում:

ՍԱ ԱՐԴԵՆ ՈՉ ԹԵ ՆԵՐՇՆՉԱՆՔ Է, ԱՅԼ՝ ԻՆՔՆԱՆԵՐՇՆՉԱՆՔ ՈՒ ԻՆՔՆԱՀԻՊՆՈՍ

Միջազգային իրավիճակն անասելի լարված է: Նոր պատերազմը թակում է մեր դռները: Իրանի բարձրաստիճան պաշտոնյան սպառնում է «սրբել, տանել» Ալիեւի ռեժիմը, իսկ մեր երկրի նախագահը շնորհակալություն է հայտնում մերօրյա ցեղասպանության հեղինակին, վարչապետն անհոգ թմբուկ է զարկում, Իջեւանից ավտոբուսներով բերված «բալզակյան» տարիքի երիտասարդները պարում են: Անվտանգության ողջ համակարգը լծվել է իրեն պաշտպանելուն, հայ հոգեւորականությանը հետապնդելուն: Պարահրապարակում «տժժում» է առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը՝ ամենաառանցքային ռեֆորմով զբաղվելու փոխարեն: Ազատ ժամեր ու օրեր շատ ունի՝ երբեմն անգամ շրջիկ պատարագներին «աղոթելու» է գնում:

ՀՀ իշխանությունն ի լուր լուռ աշխարհի հայտարարում է, թե Հայաստանը ոչ մի պարտականություն չունի աշխարհասփյուռ հայության, հայկական մշակութային արժեքների ու հայազգի մարդկանց հանդեպ: Թող սպանեն, վտարեն, եկեղեցիները մզկիթ սարքեն, քաղաքներ քանդեն՝ Հայաստանը չի միջամտելու: Թող սփյուռքի հայը չխոսի Հայաստանի մասին, չմասնակցի գործընթացներին, չխանգարի վարչապետական «բարենորոգումներին», միայն փող տա, ներդրումներ անի հայրենիքում: Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը սրան պատասխանում է. «Եկեղեցին միշտ հաղթել է սատանային, այդպես էլ լինելու է»: Նիկոլը պատերազմ է մղում Եկեղեցու դեմ: Իսկ հայ ազգն ամեն օր ավելի շատ է մասնակցում պատարագներին, դեմքով դառնում դեպի Եկեղեցին: Հրոսակների արշավը տապալվել է:

Վարչապետը նահանջելու միտք չունի. լուծարվեց գնդերեցների ծառայությունը: Պետական ողջ համակարգը նետված է Եկեղեցու դեմ: Եկեղեցու դեմ արշավն ունի շատ պարզ քաղաքական իմաստ՝ երբ հասարակությունը զբաղված է հոգեւոր պատերազմի քննարկմամբ, չի խոսում սահմանների, անվտանգության, տնտեսական ձախողումների մասին: Սա դասական տեխնոլոգիա է՝ստեղծել սրբապղծության սկանդալ, որպեսզի պետական ձախողումները երկրորդ պլան մղվեն:

Բայց Հայաստանում Եկեղեցին սոսկ ինստիտուտ չէ. այն հիշողություն է, ինքնություն, դիմադրության կոդ: Այստեղ ֆարսը բախվում է իրականությանը, եւ բոլորը չէ, որ հասկանում են, թե ինչ է կատարվում: Մյուսներն էլ սեւ հումոր են անում. «Նիկոլին սխալ ենք հասկանում՝ նա զբաղված է Եկեղեցու բարենորոգման գործով: Հաշվեք՝ քանի շահամոլ ու պիղծ եկեղեցականի դիմակ պատռեց ու հեռացրեց Եկեղեցուց: Բարենորոգումը հենց այդպես է լինում»:

Ուրիշ բարենորոգումներ ու պայքար էլ է տանում գործող իշխանությունը. օրեր առաջ նախկին նախարարներից մեկը դատապարտվեց 4,5 տարվա ազատազրկման, բայց անմիջապես ազատվեց պատժից՝ «համաներման տակ է ընկնում»: Եվ սա եզակի դեպք չէ՝ կամ համաներում է, կամ ժամկետանց մեղադրանք: Անօրինությունների դեմ պայքարի «նոր մշակույթ» է ներդրել Փաշինյանը՝ զուտ փիառի համար ընթացող դատավարություններ, որոնց արդյունքում ոչ ոք չի պատժվում.կամ անգրագետ մեղադրանք է, կամ ժամկետն անցել է: Մեղադրյալներն էլ միայն նրանք են, ովքեր իր թրի տակով չեն անցել:

Նիկոլ Փաշինյանը ճգնում է ցույց տալ, որ ամեն ինչ անում է, իրականում՝ ոչինչ չի անում: Խոսում է ամեն ինչի մասին, այսինքն՝ ոչնչի մասին: 200 հազար աշխատատեղի մասին է հայտարարում, փնտրում ենք՝ չենք գտնում: Հաջորդ օրը ավետում է, թե մեր երկիրը հասել է իր բարեկեցության ամենաբարձր կետին, մյուս օրն իմանում ենք, որ 500-ից ավելի ընտանիքի զրկել են «Փառոսից»: Անվճար բուժօգնություն է երկրում կամ բժշկական պարտադիր ապահովագրություն, բայց միայն խորհրդատվության համար հազարավոր քաղաքացիներ արդեն 10-15 հազար դրամ են վճարում՝ մինչ օգնություն ստանալը: Ասում է՝ բռնությունը տեղ չունի Հայաստանում, նույն օրը տեսանյութ է հրապարակվում, թե ինչպես է քննիչը ծեծում հարցաքննվողին: Քրեակատարողական հիմնարկներում ոչ թե հանցագործներ են նստած, այլ՝ սրբազաններ, գործարարներ, հայրենասերներ: Իսկ կաթողիկոսի ոտքը ջարդելու կոչ անողն ազատության մեջ է: Ինչքան շատ են «նորմալ պետություն», «նորմալ հարաբերություններ», «նորմալ կյանք» արտահայտություններն օգտագործում, այնքան հակառակի մեջ ենք համոզվում: Երբ ստիպված են ամեն օր ներշնչել, թե բռնություն չկա, բարեկեցություն կա, աշխատատեղեր կան, նշանակում է՝ իրականությունը ճիշտ հակառակն է: Սա արդեն ոչ թե ներշնչանք է, այլ՝ ինքնաներշնչանք ու ինքնահիպնոս:

Արդեն 25 վարչապետացու եմ հաշվել ես՝ նորմալ պետություններում այդպիսի աբսուրդ կտեսնե՞ք: Եվ դիոլ զարկող եւ ամեն ինչ ձախողած վարչապետն ասում է՝ հաստատ վերընտրվելու է: Շոուն շարունակվում է, իսկ հասարակությունը հարցնում է՝ մարդը քանի՞ ժամ կարող է չաշխատել ու աշխատանքը չկորցնել: Ազգային աղետը հենց այսպես է լինում: «Ըստ էության եկեք արձանագրենք». մենք կանգնած ենք անդունդի եզրին: Իսկ թիմը խելակորույս երգում է. «Ուր որ գնաս, հետդ կգամ»: ՔՊ-ականները թող գնան, բայց մենք պետք է հետ կանգնենք: Անդունդից այն կողմ Հայրենիք չկա:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 5.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՊԵՏՔ Է ՎԱԽԵՆԱԼ ՈՉ ԹԵ ՆԱԽԿԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻՑ, ԱՅԼ՝ ՆԻԿՈԼԻ ՄՆԱԼՈՒՑ

Ամեն օր թափ հավաքող այս քարոզարշավում այլեւս ավելի ու ավելի են հստակեցվում այն թեզերն ու նարատիվները, որոնցով որ գալիք ընտրություններում վճռորոշ դերակատարման ստանձնման հայտ ներկայացնող ուժերն ուզում են խոսել այս երկրի հասարակության ու նրա քաղաքացու հետ:

Սակայն այս նախընտրական խառնաշփոթում ամենազարմանալին, թերեւս, այն չէ, որ անգամ այսքանից հետո էլ այսօրվա իշխանությունն իր քարոզարշավը նախկիններ-ներկաներ, սեւեր-սպիտակներ, օտարերկրյա գործակալներ եւ ոչ գործակալներ տրամաբանությամբ է կառուցում: Զարմանալի չէ, որովհետեւ այս իշխանությունը մի իշխանություն է, որը լավ է հասկանում, որ եթե ինքն այլեւս այն իշխանությունն է դարձել, որը չի կատարել նախորդ ընտրություններում տված իր ոչ մի խոստում, որը տապալել է իր իսկ ձեւավորած կառավարության բոլոր ծրագրերը, որը ժամանակին չի հասկացել, որ Ադրբեջանին ու Թուրքիային իր արած անտեղի եւ չհիմնավորված զիջումներով ոչ թե խաղաղություն, այլ Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի չեղարկում է բերում, ուրեմն դարձել է նաեւ այն իշխանությունը, որը նախընտրական այս փուլում Հայաստանի քաղաքացու հետ, բացի նախկիններից ու ներկաներից, բացի թալանից ու չթալանից, բացի գործակալից ու չգործակալից, այլ բանի մասին չի կարող խոսել:

Այս իմաստով ավելի անհասկանալին, թերեւս, ընդդիմությունն է ու իշխանության հետ նրա խոսելաձեւը: Մի ընդդիմություն, որի մի հատվածը նախկինում իշխանության է եղել, եւ որի գործունեությամբ ապաարդյունաբերականացվել է Հայաստանի տնտեսությունը, բայց գոնե Արցախը չի կործանվել, թեեւ թալանվել է այս երկիրը, բայց գոնե Նիկոլի ու նիկոլականների նման ու նրանց մասշտաբի չի թալանվել, որը թեեւ շատ մեծ թերացումներ ու բացթողումներ է ունեցել բանակաշինության եւ բանակը ճիշտ սպառազինելու գործում, բայց գոնե նրան պարտության չի տարել, որը թեեւ իր՝ իշխանություն եղած ժամանակ չի աջակցել Հայ առաքելական եկեղեցուն, բայց գոնե չի հարձակվել նրա վրա, որը թեեւ շատ բան չի արել հայ մշակույթի ու հայկականության զարգացման համար, բայց գոնե չի ապականել նրա էությունը, որը թեեւ Հայաստան-Սփյուռք հարաբերությունները սխալ հիմքի վրա դրած ու սխալ հունով է առաջնորդել, բայց գոնե նրանց մեջ թշնամություն չի մտցրել... այդ ընդդիմությունը ոչ միայն նախկինի, թալանչու եւ գործակալի մասին Նիկոլի պատկերացումները բանի տեղ չդնելու, այլ նաեւ նրա պատկերացրած նախկինի, թալանչու կամ գործակալի հետ չնույնացվելու վախից՝ իր արածներից չհրաժարվելու պարտականություն ունի:

Որովհետեւ այս երկրի հետ Նիկոլի ու նիկոլականների կողմից այսքանն անելուց հետո այլեւս եկել է ժամանակը, որ ոչ միայն ընդդիմության այն հատվածը, որը նախկինում իշխանության է եղել, այլ նաեւ այն հատվածը, որը նոր է ձեւավորվել, Նիկոլին ու նիկոլականներին, առանց վախենալու, ուղղակի ասեն, որ այսօրվա Հայաստանի համար ամենավախենալուն, թերեւս, ոչ թե նորերի գալն է եւ անգամ նախկինների վերադարձը, այլ Նիկոլի ու նիկոլականների՝ իշխանության մնալն է:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am